



**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

Շքանշանների հանձնման արարողություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում

Սեպտեմբերի 9-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում՝ Գեղորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ շքանշանների հանձնման հանդիսավոր արարողություն:

Հայրենասուներ ու ազգագուտ ծառայության, ինչպես նաեւ գիտական ու առողջապահական ոլորտում ունեցած ձեռքբերումների համար Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու «Սուրբ

Արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկավ Երեմիա աբեղա Աբգարյանը: Մեծարյալների կյանքին ու արժանաշատ վաստակին անդրադարձան ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը, Աժ պատգամավոր Արտաշես Գեղամյանը եւ «Արաբկիր» մանկական հիմնադրամի տնօրեն Սպարտակ Ղազարյանը:

Այնուհետեւ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ, Գեղորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գեղորգ Եպս Սարոյանն ընթերցեց

և՛, նույն անսպառ եռանդով Ձեր հարուստ փորձառությունը ծառայեցնում Մայր Աթոռի «Իզմիրյան» հիվանդանոցի գործունեությանը՝ ի սպասավորություն մեր ժողովրդի զավակների: Մեզ համար ուրախություն է մշտապես ականատես լինել Ձեր Էջմիածնասիրությանը, որ արտահայտում էք Ձեր եկեղեցանկեր ընթացքով ու ստանձնած աստվածահաճո հանձնառություններով:

Երկարամյա մեր ծանոթության ընթացքում սրտի բերկրանք բազմիցս առիթ եկք ունեցել տեսնելու Ձեր բարի ու անկեղծ ո-

ւնի պաշտոնը՝ Դուք նվիրյալ ոգով եւ հոգատարությամբ Ձեր գիտելիքներն ու փորձառությունը ծառայեցնում էք ապաքինման կարոտ անձանց կազդուրմանն ու առողջության վերականգնմանն ի խնդիր: Գովարժան է նաեւ Ձեր գիտական ու կրթական գործունեությունը: Ձեր հեղինակած հարյուրավոր աշխատություններով ու մանկավարժական արդյունավոր ծառայությամբ Դուք նպաստել եք բժշկության ոլորտում նոր առաջընթացի ամրագրմանը:

Մայր Աթոռի լուսարարապետ Հովհան Եպս Հակոբյանն ընթեր-

պաշտոններում ստանձնած հանձնառություններով՝ տարիներ շարունակ ղեկավարելով ՀՀ առողջապահության նախարարությունը, Երեւանի պետական բժշկական համալսարանի մանկական վիրաբուժության ամբիոնը եւ օրենսդրական գործունեություն ծավալելով ՀՀ Ազգային ժողովում: Արդյունաշատ է նաեւ Ձեր գիտական վաստակը, որը շարունակում էք մեծ նվիրումով եւ նախանձախնդրությամբ:

Մեծարգո՝ պրն. Բաբլոյան, գոհունակ սրտով եկք անդրադառնում նաեւ մեր Սուրբ Եկեղեցու



Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշան շնորհվեց Գեղագույն հոգեւոր խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վիլեն Հակոբյանին, «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» պատվո բարձր շքանշաններ հանձնվեցին ՀՀ Աժ առողջապահության, սոցիալական եւ բնության պահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արա Բաբլոյանին եւ ՀՀ առողջապահության նախարարության Վ. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնի տնօրեն, ՀՀ գլխավոր ուռուցքաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայրապետ Գալստյանին:

Հանդիսությանը ներկա էին ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը, մեծարյալների գործընկերներ, առողջապահության ոլորտի ներկայացուցիչներ եւ մշակույթի գործիչներ:

տիար Վիլեն Հակոբյանին ուղղված հայրապետական կոնգակը, որում մասնավորապես նշված է. «...Աստվածապարզել Ձեր կյանքը Դուք ապրում եք հայրենի մեր երկրի հանդեպ որդիական սիրով՝ միշտ ձգտելով Ձեր կարողությունները ծառայեցնել հավատավոր մեր ժողովրդին: Երկար տարիներ Դուք ղեկավարեցիք Երեւանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարանը, հեղինակեցիք բազմաթիվ գիտական ուսումնասիրություններ ու աշխատություններ՝ գնահատարժան վաստակ բերելով ի նպաստ մեր երկրում առողջապահության բնագավառի զարգացման:

Այսօր առիթ ունեք առանձնակի գոհունակությամբ անդրադառնալու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդեպ որդիական Ձեր անկեղծ սիրուն ու նվիրումին: Տարիներ շարունակ, որպես Գեղագույն հոգեւոր խորհրդի անդամ, Դուք նախանձախնդիր ջանքեր եք բերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության առավել արդյունավորմա-

գու անվերապահ նվիրումը եւ անսակարկ հավատարմությունը՝ հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ առ Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը»:

Մայր Աթոռի վանորդից տեսուչ Արտակ Եպս Տիգրանյանը ներկայացրեց տիար Հայրապետ Գալստյանին ուղղված հայրապետական կոնգակը, որում նշված է. «Գոհունակություն է Մեզ համար անդրադառնալ մեր երկրի կյանքում արժանավոր հայորդուդ աստվածահաճո վաստակին, որ Տիրոջ օրհնության ներքո արդյունագարդված է առատ ու բարի արգասիքներով:

Մեծարգո պրն. Գալստյան, Դուք՝ որպես փորձառու բժիշկ, բարի նպաստ եք բերում Հայաստանում առողջապահության բնագավառի զարգացմանը: Հատկապես գնահատարժան է Ձեր ավանդը Ուռուցքաբանության ազգային կենտրոնի գործունեության մեջ: Ավելի քան կես դար տարբեր հանձնառություններով ծառայելով Կենտրոնում, ապա ստանձնելով նաեւ տնօրե-

ցեց տիար Արա Բաբլոյանին շնորհված հայրապետական կոնգակը, որում ասված է. «...Ավելի քան չորս տասնամյակ մանկական բժշկի վեհ եւ շնորհակալ կոչումով Դուք տքնաքան աշխատանքով ձեռք բերած Ձեր գիտելիքները, հարուստ փորձառությունը անսակարկ նվիրումով ծառայեցնում եք երեխաների առողջության պահպանմանն ու վերականգնմանն աստվածահաճո գործին: Դուք մեծ նպաստ եք բերել մեր երկրում մանկաբուժության զարգացմանը, որին ծառայում է նաեւ Ձեր կողմից հիմնված «Արաբկիր» բժշկական կենտրոնը՝ Հայաստանում լավագույնս ճանաչված բուժհաստատություններից մեկը: Ձեր անունն այսօր քաջաձանոթ է մեր ժողովրդին եւ երախտագիտությամբ է հիշվում շատերի շուրթերին, ում զավակները Ձեր հոգատար եւ շնորհալի ձեռքերով վերագտել են իրենց առողջությունը: Դուք գովարժան ավանդ եք բերել առողջապահական բնագավառի զարգացմանը նաեւ վարչական

արժանավոր զավակիդ աջակցությանը Մայր Աթոռի «Իզմիրյան» բժշկական կենտրոնին: Որպես տնօրենների խորհրդի անդամ՝ Դուք հիմնադրման օրից ի վեր Ձեր նպաստն եք բերում հաստատության կայացմանն ու արդյունավոր գործունեությանը»:

Կոնգակների ընթերցումից հետո Վեհափառ Հայրապետը Հայ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» եւ «Սուրբ Սահակ - Սուրբ Մեսրոպ» շքանշաններով զարդարեց մեծանուն գործիչների կուրծքը՝ ի գնահատություն եւ առողջապահության ոլորտում եւ հասարակական կյանքում նրանց բերած մեծ ավանդի:

Պարգևաբաշխության առիթով իրենց սրտի խոսքն ասացին նաեւ շնորհընկալները՝ բարձր գնահատանքի ու պարգևի համար երախտագիտություն հայտնելով Հայոց Հայրապետին եւ հավաստիացնելով, որ պետք է շարունակեն իրենց կարողություններն ի սպաս դնել ժողովրդի բարօրությանը:

Շարունակությունը՝ էջ 2

Շքանշանների հանձնման արարողություն Մայր Աթոռ Սբ Էջմիածնում



Սկիզբը՝ էջ 1

Այսուհետև երաժշտական կատարումներով հանդես եկան Հայաստանի «Նոր անուններ» ծրագրի պատանի երաժիշտ-կատարողները:

Հանդիսությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով:

«Մեր հոգին այս պահին ուրախությամբ է լցված, որ առիթն ունենք այսպիսի նվիրյալ հայորդիների արժանացնել մեր Եկեղեցու բարձր գնահատանքին և մեր երաժիշտագիտությունը հայտնել՝ ազգին, հայրենիքին և մեր ժողովրդին մատուցած ծառայության համար: Բոլորը քաջ

գիտեք նրանց կյանքի անցած ուղին. նրանք քանքարաթաքույց չեն եղել: Ինչ շնորհներ, որ մեր երկնավոր Տիրոջից նրանք ստացել են, ամբողջ իրենց կյանքի ընթացքում նախանձախնդրությամբ ու սիրով ծառայեցրել են մեր ժողովրդի բարօրությանը, մեր հայրենիքի շենացմանը, մեր երկրի կյանքի առաջընթացին»: Նորին Արքեպիսկոպոս ընդգծեց, որ մեծարյալներն իրենց մասնագիտական կարողություններով նաեւ զորակցել են Եկեղեցու առաքելությանը, երբ անկախության պայմաններում վերջինս հանձնառու եղավ ծառայություն մատուցել մեր ժողովրդին առողջապահության ոլորտում, և նեցուկ ու օգնական են եղել Հայոց Հայրապետին, որպեսզի «Իզմիրյան» բժշկական կենտրոնն աճի, զորանա և իր գործունեությամբ համբավ ձեռք բերի առողջապահության ոլորտում:

Վերստին բերելով իր օրհնությունը նվիրյալ հայորդիներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց շարունակել նույն նվիրումով իրենց օգտակարությունը բերել ժողովրդին և պանծացնել երկրի բարի համբավն իրենց մասնագիտական կարողություններով ու վաստակով:

«Խաղաղությունն է ապագան. կրոնների և մշակույթների երկխոսություն. Առաջին համաշխարհային պատերազմից 100 տարի անց» համաժողովը Բելգիայում



Սեպտեմբերի 7-ին Բելգիայի Անտվերպեն քաղաքում Կաթոլիկ Եկեղեցու «Սանտ Էջիդիո» կազմակերպության նախաձեռնությամբ մեկնարկեց միջազգային համաժողով՝ «Խաղաղությունն է ապագան. կրոնների և մշակույթների երկխոսություն. Առաջին համաշխարհային պատերազմից 100 տարի անց» խորագրով:

Համագումարին մասնակցում էին շուրջ 300 պատվիրակ և հյուր՝ աշխարհի կրոնական տարբեր կառույցներից և կազմակերպություններից:

Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Շարյազույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը համաժողովին ներկայացնում էր Մայր Աթոռի եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Բագրատ Եպս Գալստյանը: Սրբազան հայրը մասնակիցներին փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնի եւ օրհնության խոսքը, ինչպես նաեւ հանդես եկավ բանախոսությամբ՝ «Համերաշխություն. մեր ժամանակների բանալի» թեմայով:

Մայր Աթոռի ներկայացուցիչները մասնակցեցին «Ռենովաբիս» 18-րդ միջազգային համագումարին

Սեպտեմբերի 3-5-ը Ֆրայզինգում (Հարավային Գերմանիա) տեղի ունեցավ «Ռենովաբիս» բարեգործական կազմակերպության 18-րդ միջազգային համագումարը՝ «Եկեղեցի, լրատվամիջոցներ, հանրային կարծիք» խորագրի ներքո:

Համագումարին մասնակցեց 350 ներկայացուցիչ՝ 30 երկրից: Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Շարյազույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը համագումարին ներկա էին Արագածոտնի թեմի առաջնորդ Սկրտիչ Եպս Պողոսյանը եւ հայաստանյալ «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի տնօրեն դոկտոր Կարեն Նազարյանը:

Համագումարի ընթացքում քննարկվեցին եկեղեցական մամուլին եւ դրա զարգացմանը, ՀԱՄ-ների հետ Եկեղեցու արդյունավետ համագործակցության ուղիներին վերաբերող հարցեր: Մասնավոր անդրադարձ կատարվեց այն հարցին, թե ինչպես է Եկեղեցին ընկալվում եւ ներկայացվում լրատվամիջոցների կողմից:

«Իրավիճակը Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայում» թեմայի շրջանակներում համագումարը քննարկեց նաեւ լրատվամիջոցների էթիկային, մամուլի ազատությանը եւ նոր լրատվամիջոցների առնչվող խնդիրներ:

Համագումարի օրերին Հայ Եկեղեցու ներկայացուցիչներն առանձին հանդիպումներ ունեցան «Ռենովաբիս» ղեկավարների հետ՝ ձեւավորված համագործակցության առավել ընդլայնման եւ արդյունավետության նպատակով:

Բոգե վանքում կայացավ «Երանի խաղաղարարներին» միջազգային էկումենիկ 22-րդ համագումարը

Սեպտեմբերի 2-7-ը Իտալիայի Բոգե վանքում տեղի ունեցավ միջազգային Էկումենիկ 22-րդ համագումարը՝ «Երանի խաղաղարարներին» խորագրով, որին Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Շարյազույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին ներկայացնում էր Կաթողիկոսական գրասենյակի գործավար Ադամ քին. Մակարյանը: Էկումենիկ ժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ Ուղղափառ, Կաթոլիկ, Ղպտի, ինչպես նաեւ բողոքական Եկեղեցիներից:

Համագումարի ընթացքում Ադամ քահանան զեկույց ներկայացրեց Հայ Եկեղեցու մեծագույն հոգեւորականներից Ներսես Լամբրոնացու վերաբերյալ՝ «Ներսես Լամբրոնացու ուսմունքը խաղաղության մասին» վերնագրով: Բանախոսություններից զատ՝ եղան նաեւ լայն քննարկումներ՝ միջեկեղեցական հարաբերությունների արդյունավորման, Եկեղեցիների միությանն ուղղված աշխատանքների, աշխարհում խաղաղության վերհաստատման գործում Քրիստոսի Եկեղեցու դերակատարության վերաբերյալ:

Միջազգային էկումենիկ ժողովին Հայ Եկեղեցու ներկայացուցիչը համագումարի կազմակերպիչներին եւ մասնակիցներին փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնի եւ օրհնության խոսքը:

**Ն. Ս. Օ. Ս. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՐԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԷԿՈՒՄԵՆԻԿ
22-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԱՌԹՈՎ**

Սիրելիներ,

Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Միջազգային Էկումենիկ 22-րդ համագումարի կազմակերպիչներին ու մասնակիցներին:

Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ քույր Եկեղեցիների ներկայացուցիչների մասնակցությամբ ամենամյա Միջազգային էկումենիկ համագումարն առիթ է ընծայում վերաթեւորելու Քրիստոսի Եկեղեցու սուրբ հայրերի, նշանավոր եկեղեցական հեղինակների



ծառանգությունը, ինչպես նաեւ խթանելու մարդկության կյանքում Ավետարանի լույս պատգամների քարոզչության ու տարածման կարեւոր առաքելությունը:

Այս տարի համագումարի խորագիրը մեր Տեր Հիսուս Քրիստոսի նշանակալի խոսքն է՝ «Երանի խաղաղարարներին», որը հակամարտություններով, պատերազմական գործողություններով խռովված աշխարհում աստվածային կյանք ու հրավեր է դեպի խաղաղության հանգրվան, ողջ մարդկության բարօր կյանքի հաստատման: Մարդն այս աշխարհի տարատեսակ փորձություններում, միջանձնային հարաբերություններում, նաեւ հասարակական կյանքի ընթացքներում վեր հանող խնդիրների ու մարտահրավերների մեջ տեղնում է տերունաշնորհի խաղաղություն, որի ճանապարհը մեր առջեւ բացվում է Բաժրյալն Աստծո հետ աղոթական միավորությամբ, Նրա հայրական կենարար պատվիրանների իրագործումով:

Այսօր մարդկությունը հասել է արդիական տեխնոլոգիաների զարգացման, տեղեկատվության արագ տարածման, տեղաշարժման մեծ արագության բարձրագույն նվաճումների, սակայն հաճախ ձախողվել է քրիստոսապատվեր սիրո, աստվածային խոսքի գերակայության, համերաշխ գործակցության ու փոխըմբռնման հաստատման ընթացքներում: Սուկ նյութական ձեռքբերումները երաշ-

խավոր չեն մարդու հոգեւոր առաջընթացի ու կատարելության եւ այնքան փափագելի խաղաղության հաստատման համար: Սուրբ Եկեղեցին մշտապես մաղթում է՝ «խաղաղություն ամենեցուն» եւ բաշխում երկնապարզեւ շնորհները, որպեսզի վերափոխվեն ու պայծառակերպվեն մարդիկ, լինեն Աստծո ժողովուրդը, քանզի ինչպես ասում է սաղմոսերգուն, «Տերն Իր ժողովրդին գորություն պիտի տա, Իր ժողովրդին պիտի օրհնի՝ խաղաղություն կապրեցնելով» (Մաղմ. ԻԸ 11):

Աղոթում ենք առ երկնավոր մեր Տերը, որ խաղաղությունը վերահաստատվի համայն աշխարհում, ի մասնավորի՝ պատերազմական իրադարձությունների արհավիրքներն ու նեղությունները կրող Մերձավոր Արեւելքում, Սիրիայում, Ուկրաինայում: Հայցում ենք, որ ամենողորմն Աստված բարօրություն ու նորոգ առաջընթաց պարգեւի մարդկությանը՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի պատգամների կատարմամբ, աստվածահաճո կյանքի ու գործոց բարի ընթացքներով:

Թող Տերը Սուրբ Հոգու շնորհներով զորացնի ձեզ, Իր զորակցությամբ նորանոր հաջողություններ պարգեւի ամենքիդ եւ բերուն արդյունքներով արգասավորի այս ժողովում ձեր միասնական աշխատանքները:

Շնորհք, սեր և խաղաղություն Տեսնեմք մերոյ Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ



Լոր-մշակութային կենտրոններն ունեն հազարամյակային արվեստա-նոցներ, որտեղ զարգացման բարձր մակարդակի հասավ մաս-րակարգությունը: Չարթունք ապ-րեց նաեւ գրչության արվեստը: Վանքերին կից գործող գրչատնե-րում կատարված ընդօրինակում-ներով մեզ են հասել հին հայկա-կան եւ վաղբրիստոնական նշա-նավոր հեղինակների բազում աշ-խատություններ:

Հայագիտության՝ որպէս գի-տության ինքնուրույն համակար-գի առաջացմանը նպաստեցին նաեւ ԺԳ-ԺԷ դարերում քարոզչա-կան կամ այլ առաքելությամբ Հա-յաստան եւ հայաբնակ վայրեր այցելած եկրոպացիները, որոնք առանձնակի հետաքրքրություն ցուցաբերեցին հայոց պատմու-թյան եւ մշակույթի նկատմամբ:

ԺԵ-ԺԸ դդ. երկու հզոր պետու-թյունների՝ Թուրքիայի եւ Պարս-

կաստանի տիրապետության հետեւանքով հայ ժողովուրդը հայտնվեց քաղաքական ու տնտեսական անմխիթար վիճակում: Սակայն նույնիսկ այս պայմաններում հայ միտքը չդադարեց ստեղծագործելուց, եւ ա-րարող ոգու կանթոնը չմարեց: Ճիշտ ըմբռ-նելով պահի բախտորոշիչ լինելը՝ հայերը տպագրական գյուտն օգտագործեցին սե-փական մշակույթը զարգացնելու եւ ազ-գային ինքնագիտակցությունը մշտադրու-թյուն պահելու համար. հիմնադրվեց հայ պար-բերական մամուլը, որը հսկայածավալ ժա-ռանգություն թողեց: Պատմական այս շր-ջափուլում հայ մշակույթի զարգացման կենտրոններ դարձան գերագանցապես հայկական գաղթօջախները: Հայ Եկեղեցու դերը եւս անուրանալի է. վերջինս թե՛ հայ-րենիքում, թե՛ գաղթօջախներում ջանք չէր խնայում՝ պահպանելու դավանանքը, ազ-գային մշակութային գոհարները, արվես-տի նմուշները, ազգային սովորույթներն ու ավանդույթները՝ գիտակցելով, որ դա է ազգի հարատեւման «հոգեւոր զենքը»:

Հայագիտությունը լուրջ առաջընթաց ապրեց ԺԸ դարի սկզբին, երբ հիմնադրվեց Մխիթարյան միաբանությունը: ԺԺ դարի 80-ական թթ. Վիեննայի Մխիթարյաններն սկսեցին հրատարակել «Հանդես ամսո-րեայ» պարբերականը: Եթե նախորդ շրջա-նում հայագիտությունը գերագանցապես օժանդակ տեղեկատվական միտում էր ու-նեցել եւ ջանացել էր հիմնականում պա-

տասխանել արեւելագիտությանը հետաք-րքող հարցերին, ապա միաբանության հիմնադիր Մխիթար Մեքաստացու եւ նրա հաջորդների՝ Ստեփանոս Ազունցի, Միքայել Չամչյանի, Մկրտիչ Ավգերյանի, Ղուկաս Ինճիճյանի, Հովսեփ Գաթըրճյանի, Արսեն Այտընյանի եւ ուրիշների աշխատություն-ները հայագիտությունը դարձրին ներքին օրինաչափություններով եւ սկզբունքներով օժտված, ազգային ճանաչողական նպա-տակներ ունեցող ինքնուրույն համակարգ: Հայագիտության համակարգում, որպէս առանձին գիտաճյուղ, զարգացավ լեզվա-բանությունը: Բառարանագրության մեջ արժեքավոր է Մ. Մեքաստացու, Գ. Ավետի-քյանի, Խ. Սյուրմեյանի, Մ. Ավգերյանի, Մ. Զաքունու եւ այլոց ներդրումը:

Գիտական լուրջ գործունեություն ծա-վալվեց հայերենի համեմատական ուսում-նասիրության բնագավառում: Հայ լեզվա-բանության առանձնակի ծառայություն մատուցեց Անտուան Մեյյեն (**Հ. Ամայան**, Անտուան Մեյյե. Հայագիտական ուսումնա-սիրություններ, Երևան, 1978, 822 էջ, գրախոսություն, «Պատմա-բանասիրա-կան հանդես», 1979, թ. 2, էջ 253-256): Մե-ծարժեք է նրա «Հին հայերենի տարրական դասընթաց» (գերմ. 1913) աշխատությու-նը, իսկ «Դասական հայերենի համեմա-տական քերականության ուրվագիծ»-ը (Ֆրանս. 1903) հայերենի համեմատական քերականության առաջին եւ միակ ամբող-ջական շարադրանքն է:


Հայագիտության ուշադրության կենտ-րոնում էին նաեւ հայ պատմիչների աշխա-տությունների գիտական ուսումնասիրու-թյունը, հրատարակումն ու թարգմանու-թյունները:

Մովսես Խորենացու «Հայոց պատմու-թյան» առաջին հրատարակությամբ (1695) հիմնավորվեց եւ զարգացավ հայ աղբյուրագիտությունը:

Անգլահատեյի Ե Մխիթարյան միաբա-նության անդամ Միքայել Չամչյանի՝ 1870-ական թթ. հարատարակած «Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ Տեառն 1874» եռահատորի գիտական ար-ժեքը: Պատմահայր Մովսես Խորենացու երկից հետո այն հայոց պատմությանը նվիրված առաջին ընդհանրացնող աշխա-տությունն էր: Արժեքավոր են նաեւ Մկր-տիչ Ավգերյանի «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնն Սրբոց...» մատենաշա-րը, Ստեփանոս Ազունցի եւ Ղուկաս Ինճի-ճյանի «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի», Հովսեփ Գաթըրճյանի «Տիե-գերական պատմութիւն» աշխատություն-ները: Հայագիտության մեջ խոշոր ներդ-րում էին Դեռնոյ Ալիշանի «Տեղագիր Հա-յոց Մեծաց», «Սիսուան», «Շիրակ», «Այ-րարատ», «Սիսական» պատմաաշխար-հագրական աշխատությունները:

Շարունակությունը՝ էջ 5

Տրասարակվել է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2014 թ.)



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծա-րագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը Գե-ւորգյան հոգեւոր ճեմարանի «Սերմնացան» մատենաշարի շր-ջանակներում լույս է ընծայել

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան **Գարեգին սարկավազ Հովսեփյա-նի** (Գարեգին Կաթողիկոս Հովսե-փյանց) **«Եկեղեցին եւ աղքատնե-րի խնամատարության գործը»** արժեքավոր աշխատությունը:

Այս աշխատությունն իր ուրույն ու կարեւոր տեղն է զբաղեցնում Գարեգին Հովսեփյանի հարուստ ու բազմաբովանդակ գիտական ժառանգության մեջ եւ մեծապես պայմանավորված է 20-րդ դարի սկզբին հայ ժողովրդի առջեւ ծա-ռացած մարտահրավերներով: Գարեգին Հովսեփյանն իր այս աշխատանքով նպատակ է հե-տապնդել ձեւավորելու այնպիսի մթնոլորտ եւ գաղափարական սկզբունքներ, որոնք թույլ կտան Հայ Եկեղեցուն ակտիվ եւ կազ-մակերպված գործունեություն ի-րականացնել սոցիալական ծա-ռայության բնագավառում, ինչ-պես նաեւ հստակ դիրքորոշում որդեգրելու ժամանակի սոցիալ-տնտեսական խնդիրների նկատ-մամբ:


Աշխատության մեջ երեւելի է-

կեղեցականի ուշադրության կենտրոնում առաջնահերթ նշա-նակություն են ունեցել հասարա-կության խոցելի խմբերի՝ աղ-քատների, որբերի, անչափահա-սների, մուրացկանների, աշխա-տազուրկների եւ բարոյական անկման եզրին կանգնած մարդ-կանց ճակատագրերը: Ուսումնա-սիրության առաջաբանը շարադ-րել է Մայր Աթոռի հոգեւոր-կրթա-կան հաստատությունների վերա-տեսուչ, Գեւորգյան հոգեւոր ճե-մարանի տեսուչ Գեւորգ Եպիսկո-պոս Սարոյանը:

Գիրքը հրատարակվել է մեկե-նասությամբ «Սարգիս Գաբրիե-լյան» հիմնադրամի եւ նախա-տեսված է ընթերցողների լայն շրջանակների համար:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը, ըն-դառաջ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, լույս է ընծա-յել **Ավագ Հարությունյանի «Հա-յոց ցեղասպանություն եւ Հայկա-**



կան հարց. գրքերի մատենագի-տություն» արժեքավոր աշխա-տությունը:

Գիրքը ներկայացնում է Հայոց ցեղասպանությանը եւ Հայկա-կան հարցին նվիրված 1860-2010 թթ. հրատարակված 19 լեզվով 17.235 միավոր գրքի ամփոփ եւ համապարփակ մատենագիտու-թյունը: Ի տարբերություն մինչ այժմ տպագրված մատենագի-տությունների՝ աշխատությունն

ունի հայերեն, ռուսերեն, անգլե-րեն, ֆրանսերեն, գերմաներեն եւ թուրքերեն լեզուներով կազմված օժանդակ ցանկեր՝ ըստ անհեղի-նակ հրատարակությունների, անձանունների, աշխարհագ-րական անունների, հրատարա-կիչների, տպագրության վայրե-րի եւ տպագրության ժամանա-կագրության: Ա. Հարությունյանի հեղինակած առաջաբանում հանգամանորեն ներկայացված են մինչ այժմ հրատարակված նմանօրինակ մատենագիտու-թյունները եւ այս աշխատության կազմության սկզբունքները: Որ-պես հավելված՝ զետեղված են նաեւ թեմային առնչվող 2011-2013 թթ. տպագրված գրքերի ցանկեր:

Այս համահավաք մատենա-գիտությունն օգտակար ուղե-ցույց կլինի Հայոց ցեղասպանու-թյան ու Հայկական հարցի ու-սումնասիրությամբ զբաղվողնե-րի համար:

Գիրքը հրատարակվել է մեկե-նասությամբ «Սարգիս Գաբրիե-լյան» հիմնադրամի:

Լրատվական նյութերը՝ ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Սկիզբը՝ թիվ 13-16

Ահա գրական այս հարուստ վաստակն է, որ գաղափարական սխեմաների մեջ տապալվող գրական անհաջող փորձերի կողքին ստեղծում է մնայուն գեղարվեստական ժառանգություն: Առաջնորդը Չարենցն էր: Իրավացի էր Արտաշես Կարինյանը՝ ասելով. «...մեզ մոտ կա լայնագույն մի լսարան, որը մեծ ուշադրությամբ, սիրով եւ հետաքրքրությամբ հետեւում է այդ կիսավայրենի սկյութացու բիրտ բնավորությամբ օժտված տաղանդավոր գրողին» («Չարենց», ԽՅ, 1925, թիվ 197, 30 օգոստոս): Կարինյանը Չարենցի «դերը հավասարազոր է [համարում] ԲաժՖիի կատարած գործին»: Հողվածի շարունակությունն էր մեջ գտնում է, որ Չարենցի մեջ «անիշխանությունն արտահայտված է բավական որոշ», նաեւ՝ «ուժեղ եւ ամուր է նրա այսօրվա քաղաքացիական պոեզիան» (ԽՅ, 1925, թիվ 202, 6 սեպտեմբեր): Չմոռանանք՝ «հայրենասիրությունը» արգելանքի տակ էր, եւ «քաղաքացիականը» մասամբ փոխարինում էր դրան:

Յուրի Լեբեդինսկին գրախոսում է 1926-ին ռուսերեն թարգմանությամբ լույս տեսած «Երկիր Նաիրի»-ին եւ ասում. «...մեր կարծիքով «Երկիր Նաիրի»-ն ազգային երեւոյթ լինելու սահմանից այն կողմ է անցել»: «այն կողմ» ասելով՝ նկատի ունեւր հետեւյալը. «Չարենցը ոչ միայն ազգային գրող է, որին մեզ աշխատում է համոզել Մ. Շահինյանը [գրքի առաջաբանի հեղինակը], այս աշխատության մեջ նա ինտերնացիոնալ պրոլետարական գրականության պատկանող գրող է: Հայաստանի պրոլետարական գրականության զարգացման համար Չարենցի գիրքը չափազանց խոշոր նշանակություն ունի» (ԽՅ, 1926, թիվ 204, 5 սեպտեմբեր, արտատպություն «На литературном посту» ամսագրից): Գիրքն ուղեցույց էր պրոլետգրողների համար, որովհետեւ դրանում «ծաղրի եւնարկվեց բուրժուական, ազգայնական քաղաքավարությունը» (Գ. Վանանդեցի, «Պրոլետգրողների միության 5-րդ տարեդարձի առթիվ», ԽՅ, 1927, թիվ 294, 25 դեկտեմբեր): Հայրենիքի եւ հայրենասիրության իրենց յուրահատուկ ըմբռնումն են բերում Մահարին, Բակունցը, Արմենը, Թոթովենցը, Եսայանը, Լեւ Կամարը:

Մահարին տեսնում էր իր հայրենիքի իրական պատկերը՝ աթաղի դեզեր ու հետամնացություն: Փարիզը երազանք էր, իսկ Փարիզին հասնելը՝ անիրական ցանկություն: Երկրի առաջընթաց էր երազում բանաստեղծը եւ այդ ցավով գրում «Արշավում է արծակ մեր դարերով» բանաստեղծությունը (ԽՅ, 1929, թիվ 215, 20 սեպտեմբեր):

ՀԱՅՐԵՆԱՊԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ XX ԴԱՐ

(մասնակի կրճատումներով)

Արշավում է արծակ մեր դաշտերով
Երկաթե [սուրհանդակ] Շահումյանը.
<...> Վաղը տոն կլինի երկաթավոր

ու վեհ,

Ու պղինձ կհագնեն անգամ
հասկերը մեր,

Արեւը կհասնի որպէս երկաթե միդգ,
Ու չուզուն կցանի երկաթավոր

մի ձեռք...

Այս մտայնությունը շարունակվում է «Երբ արշավում է երկաթը» գագեթում, «Վերելք», «Մարշ կառուցողական» եւ մի քանի այլ բանաստեղծություններում ու պոեմներում:

Մամուլում լույս տեսան երկեր, տպագրվեցին գրքեր: Հունձքն առատ էր: Բայց... Չի խանգարի ծանոթանալ դրանց բովանդակությանը:

Ալազանը տպագրում է «Կարմիր հաղթանակ» (ԽՅ, 1921, թիվ 111, 25 հունիս) բանաստեղծությունն ընդդէմ Նոյեմբի, «համաշխարհային պառաված բուրժուազիային մատ է թափ տալիս» («Ահագանգ»), գրում է «Անողորմ երգեր» շարքը, նաեւ հանդես գալիս Վ. Անողորմ գրական կեղծանվամբ եւ լույս աշխարհի հանում «Երկաթե քառակնեք» շարքը:

Վշտունու անիրական Արեւելքը դառնում է գաղափարական կարմիր դրոշակ եւ ստանում այսպիսի գնահատական. «Վշտունու Արեւելքը նախ եւ առաջ ազգային-ազատագրական շարժման ու դասակարգային պայքարի Արեւելքն է» (Վ. Ա., «Արեւելքը հուր է հիմա», ԽՅ, 1927, թիվ 140, 19 հունիս):

Բանավեճերը հաջորդում են մեկը մյուսին, բայց առանց «հայրենիք» բառի իմաստային հոմանիշներից որեւիցէ մեկի հիշատակության: Ալազանը Հայպետհրատին մեղադրում է «նացիոնալիզմի» մեջ, որովհետեւ 1926-1927 թթ. հրատարակական պլանում 141 մամուլ նախատեսել է դասականների համար եւ սոսկ 30 մամուլ՝ պրոլետգրողների: Միջանկյալ ավելացնենք՝ անգամ այդքանն էլ շատ էր, որովհետեւ իբրեւ պրոլետգրականություն՝ տպագրվում էր գրական աղբ:

Ուղղափառ պրոլետգրողները հայրենասիրությունը սահմանափակեցին գյուղի եւ քաղաքի սոցիալիստական շինարարության, կառուցումի, ազատագրվող

Արեւելքի, հեղափոխության հերոսների, հին ու նոր առաջնորդների շրջանակներում:

Բուն հայրենասիրության մեղադրանքն անմիջապես նացիոնալիստին հաջորդող դաշնակցականն էր, ապա՝ հակահեղափոխականը, որպէս հետեւանք եւ ոչ թե որպէս արդյունք՝ ժողովրդի թշնամին: Ըստ Վշտունու՝ Չարենցի երկերի ժողովածուի երկհատորյակում (1922) «կա եւ շովինիզմ, եւ ինդիվիդուալիզմ, եւ ցարիզմ, եւ ամեն ինչ» (Ա. Վշտունի, «Նամակ խմբագրության», ԽՅ, 1928, թիվ 6, 8 հունվար): Չարենցին «արդարացնելու» համար նրան նույնիսկ ուզում են փրկել «ազգային» բառից: 1928 թ. հունվարի 19-ին Թիֆլիսում բացված Պրոլետարական գրողների անդրկովկասյան առաջին համագումարի «Հայ պրոլետգրողների տարածայնությունը վերացած» հայտարարության բանաձեւում կարդում ենք. «...անպայման սխալ է եղել <...> ընկ Չարենցի ստեղծագործությունը համարել «ազգային», նույնը պիտի ասել եւ Ա. Բակունցի ստեղծագործության մասին» (ԽՅ, 1928, թիվ 23, 28 հունվար): «Պրոլետգրողների անդրկովկասյան առաջին համագումարի արդյունքները» հոդվածում Գ. Վանանդեցին այսպէս է ձեւակերպում պրոլետգրականությունը. «Այդ գրականությունը ազգային է իր ձեւով, իր լեզվով, իր մեջ անդրադարձող տվյալ ազգությանը հատուկ կոլորիտով» (ԽՅ, 1928, թիվ 25, 31 հունվար): Այս ոգեւորությամբ Վանանդեցին գրում է հերթական հոդվածը՝ «Դաշնակցությունն ըստ Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի» (ԽՅ, 1928, թիվ 105, 6 մայիս): Վշտունին հիմա արդէն հարձակում է գործում Սփյուռքի առանձին բանաստեղծների դէմ. «Դաշնակցության «Երկիր դրախտավայրը» եւ «Դրախտային մեղեդիները» (ԽՅ, 1928, թիվ 151): Դրական է գնահատվում Չարենցի «Խմբապետ Շավարշը» պոեմը (Հենրի, «Նոր ուղի» ամսագիր N 1-ը», ԽՅ, 1929, թիվ 14):

Գրական խմբակցությունների հերթական միացման առիթով հանդես է գալիս անողորմ Ալազանը եւ բարբառում. «Դաշնակ գրչակները «համայն ազգության» գոժում են Հայաստանի գրականության անկման եւ կործանման բոլոր: Ըստ



Նրանց՝ Հայաստանում գրականությունը մեռնում է, պրոլետգրողներն այնքան են «այլասերված», որ գրում են կոմկուսի, կոմսոմուլի, կոմիստերնի եւ թուրքի մասին, իսկ «ուղեկից» գրողներն էլ, ըստ նրանց հերյուրանքների, գրում են չեկայի սարսափների տակ» (Վ. Ալազան, «Պրոլետարական իդեոլոգիայի հաղթանակի համար», ԽՅ, 1929, թիվ 98, 28 ապրիլ): Սա մեղադրանք է, այլ ճշմարտություն, որ դաշնակցությանը քննադատելով՝ հիշեցնում է Ալազանը:

«Նոր ուղի» ամսագիրը, որ սկսեց լույս տեսնել 1929-ից, փորձեց մասնակիորեն շտկել ավերածությունները եւ գրական զարգացումը դնել բնականոն հունի մեջ: Այդ նպատակով ասպարեզ տրամադրվեց նաեւ «հին գրողներին ու արվեստագետներին»:

Նկատի ունենալով Մահարու ինքնակենսագրական վիպակները՝ Պողոս Մակինցյանը գրում է. «...Մահարու Վանը կապի, ինչպէս հնում ապրել է ԲաժՖու Վանը: Սա հեղինակի եւ մեր արդի գրականության ամենախոշոր նվաճումներից մեկն է» («Նոր ուղի», 1929, թիվ 4, էջ 237):

Ամսագրում տպագրվում են Բակունցի «Կարմրաքար», Խ. Աբովյանի «Անհայտ բացակայումը», Շիրվանզադեի «Կյանքի բովից», Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» երկերը, Չարենցի «Լիրիքական անտրակտ» շարքը, Մահարու առանձին բանաստեղծություններ:

Ազգային հարցին մի նուրբ անդրադարձ կա Ֆրիտյոֆ Նանսենի «Հայկական հարցը եւ անտանտան» հրապարակման մեջ. «Վա՛յ հայ ժողովրդին, որ նրան խառնեցին եվրոպական քաղաքակրթության: Նրա համար ավելի լավ կլինէր, որ ոչ մի եվրոպական դիպլոմատ երբեք արտասանած չլինէր նրա անունը» («Նոր ուղի», 1930, թիվ 4-5, էջ 60):

Շարունակությունը՝ էջ 6

Քլայվ ԼՈՒԻՍ

Սկիզբը՝ թիվ 3-6, 8-16

Բրիտանացի հանրահայտ գրող Քլայվ Լուիսի վերոհիշյալ գործը քրիստոնեական թեմաներով երգիծական մի ստեղծագործություն է, որ ներկայացնում է հառնակիչ կոչվող դեւի նամակները նրա զարմիկ Օշինդրին: «Խառնակչի նամակները» ստեղծագործությունը՝ որպէս առանձին գիրք, առաջին անգամ հրատարակվել է 1942 թվականին:

18

Իմ սիրելի Օշինդրիկ,

Անգամ դարանցում, Կծկազնդիկի ենթակայության տակ, դու պիտի որ սովորած լինէիր սեռական փորձության սովորական հնարքները, եւ քանի որ մեզ՝ հոգիներիս համար, այս ամբողջ առարկան բավական ծանծաղալի է (թեւեւ անհրաժեշտ՝ որպէս մեր դասընթացի մի մաս), ես այն զանց կառնեմ: Բայց դրան վերաբերող ավելի մեծ խնդիրների մասին, կարծում եմ, դու դեռ շատ բան ունես սովորելու:

Թշնամու պահանջը մարդկանցից նման է երկսայրաբանության՝ կամ կատարյալ ժուլկալություն, կամ ծայրահեղ միամուսնություն: Մեր Հոր առաջին մեծ հաղթանակից ի վեր մենք այդ երկուսից առաջինը շատ դժվարացրել ենք նրանց հա-



մար, իսկ մյուսին՝ որպէս փախուստի միջոցի, մենք վերջ ենք տալիս վերջին մի քանի դարում: Մենք սա անում ենք բանաստեղծների եւ գրողների միջոցով՝ համոզելով մարդկանց, որ այն հետաքրքրասեր ու սովորաբար կարճաժամկետ ապրումները, որ նրանք «սիրահարություն» են կոչում, ամուսնության միակ հարգելի պատճառն են, որ ամուսնությունը կարող է եւ

պետք է այս զգացումը մշտական դարձնի, եւ որ այն ամուսնությունը, որ այսպէս չի վարվում, այլեւս միություն չէ: Այս գաղափարը Թշնամուց եկած գաղափարի մեր նմանակությունն է:

Դժոխքի ամբողջ փիլիսոփայությունը հիմնվում է այն աքսիոմի ընդունման վրա, որ մի բանը մի ուրիշ բան չէ, եւ հատկապէս, որ մի անձ մի ուրիշ անձ չէ: Իմ բարիքն իմն է, եւ բոլորը՝ բոլոր: Ինչ մեկը շահում է, մյուսը կորցնում է: Նույնիսկ անշունչ առարկան այն է, ինչ է՝ բացառելով բոլոր այլ առարկաներն իր զբաղեցրած տարածքից. եթե նա ընդլայնվում է, դա անում է մյուս առարկաները մի կողմ մղելով կամ դրանք ներծծելով: Եսը նույնն է անում: Գազանների պարագայում ներծծումն ուտելու ձեւն ունի, իսկ մեր պարագայում դա նշանակում է կամքն ու ազատությունը առավել տկարից հանել եւ ավելի ուժեղի մեջ ներքաշել: «Լինել»-ը նշանակում է «մրցակցության մեջ լինել»: Իսկ Թշնամու փիլիսոփայությունն այլ բան չէ, քան այս խիստ ակնհայտ ճշմարտությունը շրջանցելու մի շարունակական փորձ: Նրա նպատակը հակասությունն է. առարկաները պիտի շատ լինեն, բայց ինչ-որ կերպ նաեւ մեկը: Մեկի բարիքը պետք է լինի նաեւ մի

ուրիշի բարիքը: Այս անհնարինությունը Նա սեր է կոչում, եւ այս նույն ծանծաղալի ամենաբույժ դեղը կարելի է տեսնել այն ամենի մեջ, որ Նա անում է, եւ նույնիսկ այն ամենի մեջ, որ հենց Նա է կամ պնդում է, թե է՝ Այսպիսով Նրան չի բավարարում բացարձակ թվաբանական միավոր լինելը, նույնիսկ սեփական անձի դեպքում: Նա պնդում է, թե երբեք է՝ մեկը լինելով հանդերձ, որպէսզի Սիրո մասին այս անհեթեթությունը ամուր հող գտնի հենց Նրա բնության մեջ: Մյուս կողմից՝ Նա կյութի մեջ ներմուծում է այդ զգվելի գյուտը՝ օրգանիզմը, որի մասերը գրկված են մրցակցելու իրենց բնական դիտավորությունից եւ ստեղծած են համագործակցության համար: Մեռական գործողության՝ որպէս մարդկանց վերադարձման միջոցի վրա կենտրոնացման Նրա իրական շարժառիթը խիստ ակնհայտ է այն բանից, թե ինչպէս է Նա գործածում դա: Մեր տեսանկյունից՝ սեռական գործողությունը պիտի որ մի շատ անմեղ բան լինէր: Այն պարզապէս պետք է լինէր եւս մի ձեւ, որով ավելի ուժեղը որսար ավելի տկարին, ինչպէս եւ տեսնում ենք սարդերի մեջ, որոնցում հարսն իր հարսանիքն ավարտում է փեսային ուտելով:

Շարունակությունը՝ էջ 7

Սկիզբը՝ թիվ 16

Դիտելով նարդու գրավիչ խաղը երկու հայերի միջև՝ ընթերցողը տեսնում է, թե ինչպես է Հայաստանի մտապատկերը վերածվում գիտակցականի մեխանիկական արտացոլանքի: Հագոփյանը բորբոքվում է խաղի ընթացքի պատճառով, իսկ այդ ժամանակ մի ներքին ձայն շարունակ ասում է նրան. «Մոռացի՛ր Հայաստանի մասին»: Երբ նա հայացքով հետևում է իր խաղընկերոջ զանի հաջող նետմանը, նույն ձայնը հարցնում է. «Ինչպե՞ս կարող է Հագոփյանը մոռանալ Հայաստանը: ... Ես, ինչ է, կենդանի՞ եմ՝ մի փոքրամարմին, սառնարյուն մոդե՞ս» (տե՛ս Sourian P., նույն տեղում, էջ 202): Ավարտելով խաղը՝ Հագոփյանը բառերով արտահայտում է այն երկընտրանքը, որին առերեսվում են հայազգի տարագիրները, երբ առօրյա հոգսերը մշուշապատում են նրանց երազանքները: Չկարողանալով ամուր բռնել իդեալի խորհրդանշի հանդիսացող «ձկանը», որը «մասնատվել էր» ժամանակի եւ ցեղասպանության պատճառով, Հագոփյանը տեղի է տալիս այդ պահի սաստիկ հուզմունքին.

- Հայաստան, ի՞նչ է իրենից ներկայացնում Հայաստանը: Ինչպե՞ս մարդ կարող է կառնել դրան: Այն համապարփակ է, սակայն անիրական է եւ անտեսանելի՝ ի տարբերություն սենյակում եղած աթոռի կամ սեղանի (տե՛ս Sourian P., նույն տեղում, էջ 204):

Բողոսյանը կատարելապես գուրկ է այն անկեղծությունից, որը բնորոշ է Հագոփյանին: Նա կառնում է Հայաստանի մասին եղած ինչ պատկերացումներին, որոնք ժամանակի ընթացքում վերածվում են, մի տեսակ, «զենքի»: Սուրյանի հերոսն իրերն իրենց անուններով է կոչում: Սակայն նա հակված չէ «սեւ ամպեր կուտակելու»: Այդուհանդերձ՝ նա ընդունում է, որ կյանքը բարդ է ու

ԹԻԹԵՐ ՍՈՒՐՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ

խճճված: Նա պնդում է, որ կան որոշ բաներ, որոնք կա՛մ սեւ են, կա՛մ էլ՝ սպիտակ (տե՛ս Sourian P., նույն տեղում, էջ 194): Ճակատագրի հեգնանքով Փոլի հայրը՝ Սարգիսը, Բողոսյանի պես միահեծանության կողմակից է: Նա չի ցանկանում, որ ինչ-որ մեկը հակադրվի հայ ազգի մասին ունեցած իր նախապաշարմունքներին: Սուրյանի հերոսը քամահրանքով է լցված հայ ժողովրդի անցյալի հանրորեն ընդունված ու միեւնույն ժամանակ ամոթալի կողմերի հանդեպ: Փոխարենը նա գովաբանում է շվեդների ու անգլիացիների անխռովությունը: Այստեղ, անշուշտ, զգացվում է հայերից շատերին բնորոշ օտարամոլությունը: Հայերը հաճախ են հիանում օտար ժողովուրդներով՝ մոռանալով գնահատել ու փառաբանել հարազատ ազգին: Բացի նրանից, որ ամերիկահայ արձակագրի պատկերած հայրորդին քննադատաբար է տրամադրված սեփական ժողովրդի ու նրա պատմության հանդեպ, նա նաեւ ընդվզում է ազգային թերթերի դեմ, քանի որ դրանք, նրա համոզմամբ, հիվանդագին կերպով մտահեծված են հայոց ցեղասպանության թեմայի վրա: Ասել է թե՛ որոշ հայեր փափագում են մոռացության մատնել հայ ժողովրդի ողբերգական անցյալը: Այսպիսով նրանք ակամայից բարի ծառայություն են մատուցում եղեռնագործ թուրքերին: Ասվածից թող չստեղծվի այն տպավորությունը, թե Փիթեր Սուրյանի երկի գործող անձը թուրքամետ է: Բնավ՝ ո՛չ: Պարզապես նրան համակել են իրարամբեր զգացումներ: Սա երեւան է գալիս այն ժամանակ,

երբ նա խոստովանում է, որ ինքը նույնպես չի կարող չատել թուրքերին: Ուշագրավ է նաեւ Փիթեր Սուրյանի գրքի հերոսի վերաբերմունքը սեփական ազգի հանդեպ: Ահա թե ինչ յուրօրինակ գնահատական է տալիս նա հայ ժողովրդին.

- Այդ հայերն այնքա՛ն են հպարտանում իրենց գլխով անցած փորձություններով: Ինչո՞ւ նրանք ներկայումս չեն հպարտանում իրենցով: Կարող եմ բացատրել, թե ինչո՞ւ: Որովհետեւ նրանք ոչինչ չեն արել իրենց իսկ համար: Նրանք տառապել են եւ կարծում են, թե մարդկությունը պիտի ապրի իրենց փոխարեն: Նրանք շատ են տանջվել, եւ դա սարսափելի է: Իսկ հիմա ի՞նչ անել (տե՛ս Sourian P., նույն տեղում, էջ 214):

Բողոսյանի պես Սարգիսը կարծրատիպային պատկերացումներ է ստեղծում մի ողջ էթնիկ խմբի կողմնորոշումների վերաբերյալ: Քանի որ իրական հակադրության ընթացքում շատ բաներ մնում են չպարզաբանված, Սարգիսի երկվությունն ավելի ուժգին է դառնում: Գրքի հերոսն ընդունում է, որ հայ լինելն անհեթեթ մի բան է: Ահա թե ի՞նչ է նա ասում իր ազգային պատկանելության մասին. «Ես խելահեղ մարդ եմ, քանի որ ես ավելի հայեցի եմ, քան մյուս հայերը» (տե՛ս Sourian P., նույն տեղում, էջ 249): Այս մեկ նախադասությունից ակնհայտ է դառնում, որ տվյալ անձնավորությունն այնքան էլ ոգեւորված չէ իր հայ լինելու փաստով: Նա մինչեւ անգամ հրաժարվում է իր երեխաներին հայերեն սովորեցնելուց: Բայց եւ այնպես նա մշտապես մայրենի



լեզվով է խոսում: Ուշագրավ է նաեւ Սուրյանի հերոսի վերաբերմունքը Հայոց եկեղեցու հանդեպ. նա կարծիք է հայտնում, որ Մայր եկեղեցին մեկուսացած է մնացած աշխարհից, ինչը, նրա համոզմամբ, այնքան էլ ճիշտ չէ:

Փիթեր Սուրյանի գրքի հերոսի կապվածությունն իր հարազատ մշակույթի հետ երեւան է գալիս այն դրվագում, որտեղ նկարագրված է, թե ինչպես է նա բացում իր տան ամբիկյան արտադրության սառնարանը եւ այնտեղ մշտապես հայկական սննդատեսակներ գտնում: Այստեղից պարզ է դառնում, թե որքան խոր են սփյուռքահայերի մեջ արմատավորված ազգային սովորությունները: Վերջիններս շատ կայուն են, եւ դրանցից բնավ հեշտ չէ ազատվել: Մի կողմից՝ Սարգիսը «ցանկանում է ձերբազատվել ճնշող անցյալից, բայց մյուս կողմից՝ նա դիմադրում է օտար հասարակության հետ ձուլվելուն: Այդ հասարակությունը հուզա-

կան առումով ուղղակիորեն հակադիր է իրեն» (տե՛ս Sourian P., նույն տեղում, էջ 57):

Տարիների ընթացքում Սարգսի անհետնողականությունն էլ ավելի է խորացնում Բողոսյանի հիասթափության եւ անբավարարվածության զգացումները: Նա ռացիոնալ կերպով բացատրում է, որ անձնական ու քաղաքական դժգոհությունների համար այլեւ ոչ մի ելք չի մնացել: Բողոսյանն իր կյանքն ընկալում է իբրեւ անվերջանալի ստորացում: Խոսքն այստեղ վերաբերում էր ոչ միայն անձնապես իրեն, այլեւ հայ ժողովրդին առհասարակ: Բողոսյանի ատելությունն էլ ավելի է սաստկանում, քանի որ նա նմանություն է տեսնում իր ու ճարտարապետի միջեւ: Այդ մարդու սովերը պարզապես հանգիստ չի տալիս նրան: Բողոսյանը պատրաստակամ է դարձնել անկալի եւ սպանել Սարգսին «Վելո-Դոգ» տեսակի ատրճանակով, որ Սարգսի մայրը տվել էր նրան Հայաստանում 1915 թ.: Ճակատագրի հեգնանքով 1915 թ. ապրիլի 24-ը Սարգսի տասնմեկերորդ տարեդարձն էր: Այս պահից սկսած՝ մեկնարկում է իրադարձությունների մի անխմստ շղթա, որի վերջնակետը դարձավ Սուրյանի գրքի գործող անձի անհեթեթ սպանությունը:

Հետադարձ հայացքով գլխավոր հերոսի ողբերգական վախճանն օգնում է մեզ գետնելու նախորդող տեսարանները վեպի համատեքստի մեջ, ինչպես օրինակ՝ այն դրվագը, որտեղ Սարգիսը երեւակայում է, թե ինչպես է իր զորանք-մայրիկը գրուցում Գրետա Գարբոյի հետ (տե՛ս Sourian P., նույն տեղում, էջ 277-78):

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ


Սկիզբը՝ էջ 3

Նոր դարաշրջանում Եվրոպայի արեւելագետները, կովկասագետ-հայագետները լուրջ ներդրում կատարեցին հայոց գիտամշակութային պատմության ուսումնասիրման գործում. շատ երկրներում հիմնվեցին հայագիտական ամբիոններ, որոնք սկսեցին գիտական լուրջ գործունեություն ծավալել:

Հայագիտության զարգացման կարեւորագույն օջախեր դարձան Նաեւ Պետերբուրգի համալսարանը, Մոսկվայի արեւելյան լեզուների Լազարյան ճեմարանը:

1890-ական թթ. Նիկողայոս Մառի գիտական գործունեությամբ ռուսական արեւելագիտության մեջ վերջնականապես ձեւավորվեց հայագիտական ուղիությունը, որի կարեւորագույն նվաճումներից էր հայկական հնագիտության սկզբնավորումը: Նիկողայոս Մառն ու իր աշակերտները մշակեցին հայոց հին եւ միջնադարյան պատմության, մատենագրության, արվեստի, լեզվի պատմության, ճարտարապետության, վիճաբանության ու հարակից օժանդակ բնագավառների հետազոտության քննական մեթոդ:

Կարեւորագույն նվաճում էր հայկական ձեռագրերի հավաքածուների գիտական նկարագրությունը (Հակոբոս Տաշյան, Բարսեղ Սարգիսյան, Մեսրոպ Տեր-Մովսիսյան, Բաբկեն Կյուլեւսերյան), Նաեւ Ստեփան Մալխա-



սյանցի ղեկավարությամբ «Պատմագիրք հայոց» մատենաշարի հրատարակումը:

Հայագիտությունը ներառեց տեսական եւ գործնական կարելություն ունեցող նոր՝ դասական մատենագրության հրատարակության («Մատենագրությունը նախնեաց»), բնագրագիտության, համեմատական լեզվաբանության, ճարտասանության, աստվածաբանության, ճարտարապետության, արվեստի պատմության, տեսական լեզվաբանության, հնագիտության եւ հնագրության, վիճաբանագիտության, ձեռագրագիտության եւ այլ ոլորտներ:

Սկիզբ դրվեց այլալեզու, մաս-

նավորապես՝ հունարեն ու լատիներեն դասական մատենագրական ժառանգության թարգմանական հրատարակությանը, ազգային վարքերի եւ վկայաբանությունների հանրամատչելի մատենաշարին («Սովորեք հայկականը»):

Հովհաննես Շահխաթունյանի, Մկրտիչ Էմինի, Զերովեթ Պատկանյանի, Հարություն Ալամդարյանի եւ այլ հայագետների ջանքերով ուրվագծվեց ազգային ու մշակութային միասնականության գաղափարը:

Եկեղեցին հետնողականորեն խթանում էր հայագիտության զարգացումն ու առաջընթացը. բազմաթիվ հոգեւորա-

կաններ գիտական արժեքավոր աշխատություններով իրենց նպաստը բերեցին հայագիտության ձեւավորմանն ու զարգացմանը: Վերոնշյալը հիմնավորելու համար պարզապես վկայակոչենք որոշ փաստեր. Հովհաննես Կոլոտ Բաղիշեցի եւ Գրիգոր Շղթայակիր պատրիարքների ազգանվեր գործունեության արդյունքում հայագիտական պրատուններ սկսվեցին Նաեւ Կ. Պոլսում եւ Երուսաղեմում:

Հովհաննես Կոլոտ Բաղիշեցու պատրիարքության շրջանում (1715-1741 թթ.) զարթոնք ապրեց հայոց ազգային, մշակութային ու կրթական կյանքը, իրագործվեցին մի շարք նշանակալից ձեռնարկումներ: Վերաշինվեցին եւ վերաբացվեցին հայկական բազմաթիվ եկեղեցիներ: 1715 թ. բացվեց Կ. Պոլսի առաջին դպրանոցը՝ Սյրյուտարի հոգեւորները, որը մատենադարանի հետ միասին հետագայում տեղափոխվեց Գուլգափուի պատրիարքարան: Այդ ընթացքում բացվեց երկու նոր տպարան. արժանահիշատակ է Սրայյան տպարանը, որը գործեց մինչեւ Ժժ դարի կեսը: Տպագրվեց ավելի քան 80 ինքնուրույն թարգմանական գիրք: 1719 թ. Մայր եկեղեցուն կից կազմակերպվեց դպրաց դաս, որի երգչախմբերը կարեւոր դեր խաղացին հայկական ազգային հոգե-

ւոր երաժշտությունը պահպանելու եւ սերունդներին փոխանցելու գործում (**Բ. Կյուլեւսերյան**, Կոլոտ Յովհաննես պատրիարք, Վիեննա, 1904):

Առանձնապես արդյունավետ եղան Գեորգ Դպիր Պալատացու, Հակոբ Նայյան Չմարացու ջանքերը:

Հայագիտության զարգացման կենտրոն եւ գիտակրթական կարեւոր օղակ դարձավ Գեորգյան հոգեւոր ճեմարանը: Այստեղ գիտամանկավարժական գործունեություն ծավալեցին լեզվաբան Հրաչյա Աճառյանը, պատմաբան Հակոբ Մանանդյանը, բանագետ Մանուկ Աբեղյանը, բանասեր Կարապետ Կուտանյանը: Սուրբ Էջմիածնի կամարների ներքո շատ սերունդներ կրթվեցին ու դաստիարակվեցին որպես հայ եւ հայրենասեր, որպես մտածող, արվեստագետ ու գիտնական, ապրեցին հայոց պատմության խորհուրդով եւ շնչեցին բազմաչափ ազգի շնչով... Բազմաթիվ գիտնական-հոգեւորականներ Մայր Աթոռի լույսով եւ օրինությամբ ծավալեցին գիտական արգասաբեր գործունեություն: Ս. Էջմիածինն ու Գեորգյան հոգեւոր ճեմարանը նրանց հոգեւոր, մտավոր եւ հայրենասիրական ներշնչում ու ոգեւորություն հաղորդեցին:

Շարունակելի
Արփինե ՀԱՆԹԻԿՅԱՆ


ՀՈԿՅԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻՆ ՍԻՐՈ ՏԱՂԵՐԳՈՒ. ՍԻՐՈ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ՀՈԿՅԱՆՆԵՍԻ ԵՎ ԱՇԱՅԻ» ՍԻՐԱՎԵՊՈՒՄ

Սկիզբը՝ թիվ 16

Ա. Սրապյանն իր «Հովհաննես Երզնկացի» աշխատության մեջ ամեն կերպ ձգտում է ապացուցել, որ տաղը պատկանում է Երզնկացու գրչին, եւ նշում, թե այն «իր ոգով ու գաղափարով տարբերվում է հայ միջնադարի սիրերգությունից՝ սկսած Կոստանդին Երզնկացուց մինչեւ Սայաթ-Նովա, եւ բնութագրական չէ մեր սիրերգակներից ոչ մեկի համար, մինչդեռ, ինչպես իր ամբողջության մեջ, այնպես էլ ավարտով, հարազատ է Երզնկացու հայացքներին, նրա ողջ մատենագրական վաստակին առհասարակ» (Ա. Սրապյան, *Հովհաննես Երզնկացի Պուր, էջ 160-161*):

Այս տեսակետը, սակայն, համոզիչ չէ, քանի որ խրատական, բարոյակրթական, դաստիարակչական իմաստ ու բովանդակություն արտահայտող Հովհ. Երզնկացու գրական ժառանգության մեջ չկա նման բնույթի սիրային որեւէ բերթվածք: Մինչդեռ «Աշայի եւ Հովհաննեսի» (այս տաղը պահպանված է Մատենադարանի 4 ձեռագրում, որոնցից մեկում կոչվում է «Տաղ Երզնկացի Հովհաննես ասացեալ», մյուսում՝ «Տաղ ասացեալ Խել Հովանիսէ ի վերայ Աշային», երրորդում՝ «Տաղ ազնիւ ի Հովանիսէ», իսկ չորրորդում անխորագիր է) տաղը եւ իր թեմայով ու բովանդակությամբ, եւ լեզվով ու ոճով, եւ պատումի ձեռով հանգեցնում է այն համոզման, որ այն պատկանում է իրեն մշտապես «խել» անվանող Հովհ. Թլկուրանցուն: Այստեղ բոլորովին էլ պատահական չէ «խել» մակդիրի առկայությունը, քանի որ միջնադարյան ոչ մի տաղերգու, բացի 17-րդ դարի դրիմահայ բանաստեղծ Խել Կաֆացուց, իրեն այդ մականունով չի անվանել, ինչպես Թլկուրանցին:

Գեղեցիկ նկարագրություններով հարուստ այս տաղը սիրային մի պատմություն է քահանայի որդու եւ մուլլայի աղջկա մասին, որում արծարծվում է նաեւ դավանանքի խնդիրը, քանի որ Հովհաննեսը քրիստոնյա է, իսկ աղջիկը՝ Աշան, մուսուլման:



Տաղի սկիզբը պատմողական-քնարական բնույթ ունի, իսկ հետո աստիճանաբար վերածվում է տրամախոսության: Առաջին պատկերն սկսվում է հանդարտ ու խաղաղ: Հովհաննեսը դեռեւս պատանի է, «Վերի վանաց» սան (Հովհ. Թլկուրանցին, *Տաղեր, էջ 226*).

Օրն էր շաբաթ լոյս կիրակի,
Վերի վանիցն ի վայր կուզի,
Բուրվառն ի ձեռն ու խուսկն ի լի,
Սաղմոսարանն յանդս ունեի:

Սակայն դիպվածն ստիպում է նրան մոռանալ ուսած սաղմոսը, գրելն ու կարդալը: Նա հիշում է մեջքը ճոճող ու սեթեւեթ քայլվածքով Աշային, նրա խելահան հոնքերը, «Թաւրեզտանի» աչքերը: Մի անգամ էլ սաղմոսարան կարդալով ու դանդաղ ընթացող Հովհաննեսը քաղաք է իջնում եւ հանկարծ հանդիպում իր սիրած Եակին՝ «պօզ պետաւին» հեծած: Իսկ Աշան, խաղացկուն, անհանգիստ Նժույզի վրա վետվետալով, խնձոր է նետում նրան՝ ուշադրություն գրավելու նպատակով: Տղան փորձում է անտարբեր մնալ, սակայն երկրորդ անգամ արդեն անկարող է դիմանալ փորձությանը.

Խնձոր ձգեց, մտիկ չարի,
Մէկ մ'այլ ձգեց՝ ցածցայ առի...

Այստեղից էլ սկսվում է սիրո դրաման: Հովհաննեսի մայրն անհանգստացած ուրոնում է իր որդուն եւ տագնապած օգնություն խնդրում արեղաներից ու սարկավագներից՝ հուսալով, թե որդին շուտով ուշքի կգա.

Հովհաննեսին մայրն է տղայ,
Հագեր վալայ, վրան ջուպայ,
Չօրն ի վաներն ի ժուռ կու գայ,
Ու խուսկն ու մոմ կու խոստանայ:

Մայր ու որդի ջանում են համոզել մեկ-մեկու: Մայրը հիշեցնում է նրան տեղ հոր գայրույթը, իր զավակի միևնույն լինելը, ուստի եւ այդ սխալ ճանապարհից հետ կանգնելու անհրաժեշտությունը.

Շօ Հովհաննէ՛ս, ծօ ի՛մ տղայ,
Հարձիր ի տուն, ասա «մեղա՛յ»,
Հոն քո տերտերն կու ճորայ,
Թէ Աշան ընկեր ի հետ նորա:

Սակայն տղան հակաճառում է, քանի որ Աշայի սքանչելի գեղեցկության ստրուկը կարող է դառնալ նույնիսկ տերտերը, եթե մի անգամ տեսնի նրան.

Ա՛յ իմ մարիկ, ես քեզ ծառայ,
Թէ իմ տերտերն գիս ճորայ,
Նայ ես զԱշան ցցնեմ նորա,
Քան գիս ու այլ խել կու լինայ:

Նրան չեն համոզում ու հրապուրում անգամ մոր խոստումները, թե՛
Քեզի բերեմ հայու դըստրիկ,
Ըզբեզ օրինել տամ քահանայ:
Պատանեկան անկեղծ սիրով տարված Հովհաննեսն այլեւս չի կարող նրան փոխել ուրիշով.

Հայ իմ մարիկ, մի՛ տըխմարնար,
Զըկայ նըման գեմ Աշային,
Լեզուն պիլպիւլ, ձայնն դումրի,
Մէջքըն բարակ գետ ֆռակի:

Նրա սերն այնքան վերամբարձ ու ազդու է, որ անգամ մոռանում է իր սովորած սաղմոսները:

Տխուր է նաեւ Աշան, քանի որ նրա ծնողները նույնպես պահանջում են հրաժարվել իր սիրելի Հովհաննեսից.

Աշան նստեր փանճարային
Ու խիստ տրտում, ափն երեսին,
Թ'այսօր ծեծեց իմ հայր դատին -
Է՛ր կու սիրես զհայուն որդին,
Տես թէ կելնէ մէկ մի կու գա՛յ:-
Ականջըն խո՛ւլ Հովհաննեսին:

Լուրը հասնում է սիրատուհոր երիտասարդին: Նա տագնապած, գոհալք՝ ափին, միանգամից հայտնվում է խանի պալատի առջեւ: Եվ «փոքր ի պօյաց», բայց «ծանր խելաց» Հովհաննեսը, որ ուսումնական էր «Վերի վանաց» ու բանաստեղծ, կաֆաներ է ասում եւ ամուսնանալու թույլտվություն ստանում: Իսկ քերդի գլխին կանգնել է Աշան՝ հագած «զկանանչն ու զծիրանին»: Նա գիտի, որ սիրած տղան չի ուրանա իր կրոնը, եւ ինքն է համաձայնում քրիստոնեություն ընդունել: Ընդ որում՝ քրիստոնեություն է ընդունում ոչ թե հասարակ, մի սովորական աղջիկ, այլ՝ քահանայի «դատքի» դուստրը.

Քնա շինէ եկեղեցի,
Որ գամ մտնում կոշկոպս ի ներս,
Պսակ դնեն, զմեզ օրինեն,
Թող քո սրտին կամքն լինայ:

Այս գրավիչ ու հետաքրքիր վիպական տաղում ակներե են բանաստեղծի վարպետությունը, բարձր արվեստը, նկարագրելու շնորհը ու աշխույժ համեմատությունները, որոնք բնորոշ են միմիայն Թլկուրանցու գրչին: Ըստ Աբեղյանի՝ միջնադարյան տաղերգուներից Թլկուրանցին է, որ Գրիգոր Նարեկացուց ու Կոստանդին Երզնկացուց հետո առանձնահատուկ ուժով պատկերել է կնոջ արտաքինը (տե՛ս Մ. Աբեղյան, *Երկեր, հ. 7, Երևան, 1970, էջ 487*).

Եկաւ անցաւ ու ճոխ քայլեց,
Ճոճաց ու զմէջքըն կոտորեց,
Հարձաւ ի յետ խոշոր բնայեց,
Անձըս տեսաւ ու զահլնդեց:
Մէկ մի հեծեր պօզ պետաւի,
Եկաւ անցաւ քաջ մուհայի,
Աչեր ուներ Թաւրեզ տանի,
Ուներն զխելքըս կու տանի:

Թլկուրանցու այս վիպական տաղը, որ ազատ ու անկաշկանդ արտահայտություն է մեծ սիրո վայելքի, մի անգամ եւս հաստատում է, որ Թլկուրանցին հայ միջնադարյան սիրերգության մեջ իր վիպական տաղերգու կարեւոր դերակատարություն է ունեցել նման թեմատիկայով գրված չափածո խոսքի համակարգում:

Վարդան ԵՐԻԱՉԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՀԱՅՐԵՆԱԴԱՏՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ

Սկիզբը՝ էջ 4

Ազգային հարցերն արծարծվում են 1930 թ. հունիսի 8-ին տեղի ունեցած ասուլիսում՝ նվիրված արդի պոեզիայի խնդիրներին («Դիսկուսիա մեր պոեզիայի շուրջ», «Գրական դիրքերում», 1930, թիվ 6, էջ 31-55): Ամեն ինչ ուղղված էր սխեմատիզմի դեմ, որի միակ խորհրդանշական ներկայացուցիչ ու պաշտպան է դիտվում Ն. Չարյանը: Սխեմատիզմի շրջանը համարվում է 1922-1928 թթ.:

Ազգային արծարծվում է ազգային ավանդույթի, դասականներից սովորելու, տեղական «կոլորիտը» պահպանելու հարցադրումներով:

Զգիտես ինչու անցյալի պոեզիայի օգտագործումը Ն. Չարյանը համարում է «մեխանիկական» եւ ասում. «Անցյալի պոեզիայի մեխանիկական օգտագործումը սխեմատիզմի հաղթահարման միջոց հանդիսանալ չի կարող»: Նրան ձայնակցում է Սուրեն Վահուկին. «Մեր պոետների մեջ վտանգավոր օրիենտացիա է ստեղծվել դեպի արեւմտահայ պոետները...»:

«Տեղական կոլորիտի» անհրաժեշտության մասին խոսում է Դեմիրճյանը: Հնչում են Յարճանյանի, Վարուժանի, Մեծաբենցի, Տերյանի, Թումանյանի, Չարենցի անուններն ընդդեմ սխեմատիզմի նախահայր հռչակված Ն. Չարյանի անբույր թիթեղածաղիկների: Չարենցը հռչակվում է հայ պոեզիայի փաստական առաջնորդ:


Իսկ սխեմատիզմի սույն նախահոր ընդօրինակելի պոետ Ալեքսանդր Բելինսկին, ում գրական գործունեության 10-ամյակը նշվում էր 1930-ին, աշխարհին ի լուր հայ-

տարարում է. «Ամենից առաջ ես կուսակցության անդամ եմ, իսկ ոտանավոր հորինող՝ հետո» («Գրական դիրքերում», 1931, թիվ 1, էջ 46):

Ի վերջո, պրոլետարային գրականություն ասածը թե՛ ձեռով, թե՛ բովանդակությամբ հասավ մի հանգրվանի, ինչը կոչվում է սխեմատիզմ: Թե՛եւ սխեմատիզմի հայր հռչակվեց Նաիրի Չարյանը, բայց սխեմատիզմի ուղղափառ հորեղբայրը Ալազանն էր, ով հիմա սովորաբար չէր հարձակվեց սխեմատիզմի վրա եւ հայտարարեց. «...Սխեմատիզմի կմախքը դեռեւս շարունակում է շրջել մեր բոլորի գրվածքներում... Ձախճախել ու դեն նետել այդ կմախքը, ահա մեր կարեւորագույն խնդիրներից մեկը: «Ամբողջ երեսով դեպի ստեղծագործական խնդիրներ: Կորչի ինքնանպատակ կազմակերպչականությունը»:

Ալազանը հիմա էլ կոչ է անում կյանքի ճանաչողականության, մշակութային հետամնացության հաղթահարման (Ալազան, «Գրական խնդիրներ», ԽՀ, 1929, թիվ 282, 11 դեկտեմբեր):

Սխեմատիզմի դեմ պայքարի եւ մոնումենտալ արվեստի գեղագիտություն էր Չարենցի «Էպիքական լուսաբաց» (1930) ժողովածուն: «Քննադատը, գրողը եւ հարակից խնդիրներ» (ԽՀ, 1930, թիվ 22, 26 հունվար) հոդվածում Ս. Չարյանն ընդդեմ սխեմատիզմի կարմիր ներկած օդապարիկային գրականության տեսակետ է հայտնում. «...այսօրվա գրականությունը <...> չունի (մեծ մասով) եւ տեղական առանձնահատկություն, տեղական բույր եւ



գույն, որով միայն գրվածը կարող է հարազատ լինել մասսաներին <...>: Հաճախ էլ գրվածքները կտրված են հողից»: Սա այն է, ինչ «Գիրք ճանապարհի»-ում Չարենցը պիտի բանաձևեր ու ասեր. «Որ երգը երկրի՛ց է աճում եւ ո՛չ թե բառերից կամ ձայներից» («Յոթը խորհուրդ գալիքի երգասաններին»):

Սխեմատիզմի հորեղբորորդի Հ. Մկրտչյանը (Չարենցի ծաղկած Զսպեն) իր հերթին է շրջադարձ կատարում. «Մեր գրականության ամենաեական թերությունը նրա սոցիալական շրջանակների նեղությունն է եւ սխեմատիզմը» (Հ. Մկրտչյան, «Գրական տարին եւ մեր խնդիրները», ԽՀ, 1930, թիվ 27, 1 փետրվար):

Սխեմատիզմի դեմ պայքարի բարձրաձայն ճիչ էր Գ. Մահարու «Չարտասանած ճառ» (ԽՀ, 1930, թիվ 258, 2 նոյեմբեր) բանաստեղծությունը եւ «Ընդունում եմ ինձ այնպես, ինչպես կամ» ելույթը՝ ի լրումն դիսպուտի Նյութերի («Գրական դիրքերում», 1930, թիվ 6):

Բայց սխեմատիզմն այնքան էր արմատավորված, որ հնարավոր չէր միանգամից ջախջախել: Պայքարի թեժ պահն անցնում է, եւ ամեն ինչ դարձ է կատարում ի շրջանս յուր, ինչն արտահայտվում է տարբեր հոդվածներով, ինչպիսիք են Ե. Զ.-ի [Չուբարի] «Դաշնակցությունը, աչ թեքումը եւ նացիոնալ օպորտունիզմը» (ԽՀ, 1930, թիվ 31, 6 փետրվար): Հանդես է գալիս Հայկ Գյալիքեւսյանը եւ ձգում սխեմատիզմի թուլացած պնդողակները: Բաֆոն եւ Պատկանյանիկն նա հռչակում է հակահեղափոխական, նացիոնալիստական գրողներ: Ի վերջո, ըստ նրա, «Սխեմատիզմի շրջանը գրականության մեջ նույնքան անհրաժեշտ էր, օբյեկտիվորեն պայմանավորված, որքան եւ պրոլետարական ռեալիզմի առաջանալը» (Հ. Գյալիքեւսյան, «Գեղարվեստական գրականության հիմնական խնդիրները», ԽՀ, 1930, թիվ 86, 13 ապրիլ): Նույնը նա կրկնում է նաեւ պոեզիայի դիսպուտի ժամանակ. «Ես սխեմատիզմը համարում եմ պրոլետարական գրականության օրինաչափական զարգացման փուլերից մեկը» («Գրական դիրքերում», 1930, թիվ 6, էջ 56):

Սխեմատիզմի ամրապնդման էին ուղղված Ա. Բզնունու «Նացիոնալ օպորտունիզմի եւ փոստ լիբերալիզմի դեմ» (ԽՀ, 1932, թիվ 8, 9 հունվար), Գ. Անդրեասյանի «Անհրաժեշտ է շեշտակի ու անվրեպ կրակ դաշնակցության դեմ» (ԽՀ, 1932, թիվ 11, 12 հունվար. ուղղված է Թոթովենցի «Հայ ազգի «փրկիչ» դաշնակները» գրքի դեմ): Ավելացնենք՝ սխեմատիզմի շուրջ բանավեճը շարունակվեց նաեւ դիսպուտից դուրս (Գ. Վանանդեցի, «Դարձյալ գրական սխեմատիզմի մասին», «Նոր ուղի», 1930, թիվ 4-5):

Շարունակելի
Հավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ - 80

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, «Մովսես Խորենացի» մեդալի շքանշանակիր, կերպարվեստի մասին տասնյակ գրքերի («Եղեռնի անդրադարձը հայ կերպարվեստում», «Մ. Սարյան. հատընտիր», «Հովի. Այվազովսկի», «Ֆրանսահայ կերպարվեստի պատմություն», «Մ. Ավետիսյան» եւ այլն), բազում ալբոմներ

քին՝ այսօր էլ երիտասարդական ավյուրով, սիրով ու նախանձախնդրությամբ շարունակում է մնալ հավատարիմ Սարյանի կողմից իրեն տրված «թանգարանի զինվոր» պատվավոր ու պարտավորեցնող կոչմանը:

Ծնվել է 1934 թ. Սիրիայի Հալեպ քաղաքում՝ եղեռնից մազապուրծ եղած երգրուցիներ Գե-

Սարյանի տուն-թանգարանի, իսկ 1990-2003 թթ. համատեղության կարգով՝ Նաե՛լ Ազգային պատկերասրահի տնօրենի պաշտոնները: Նրա անմիջական ջանքերով, թանգարանային հավաքորդի նախանձախնդրությամբ, Սփյուռքի տարբեր գաղթօջախներից, արտասահմանյան տարբեր երկրներում ապրող ստեղծագործողներից ու անհատ մարդկանցից, որպես նվիրատվություն, միայն Ազգային պատկերասրահի եւ Սարյանի տուն-թանգարանի ֆոնդերը համալրվել են 400-ից ավելի բարձրարժեք ստեղծագործություններով: Պատկերասրահում հանգրվանած այդ գործերի մեջ հիշարժան են Այվազովսկու 12 գործերը, որոնց մի մասը հայկական թեմաներով է: Սարյանի վրձինն պատկանող 75 աշխատանք, որոնցում զգալի են վարպետի վաղ շրջանի լավագույն գործերը, մուտքագրվեց ֆոնդեր՝ լավագույնս ապահովելով թանգարանի բարձր մակարդակը:

Թանգարանային հավաքորդի, զինվորի առումով հաջատրյանին գերազանցել է միայն երջանկահիշատակ Ռուբեն Դրամփյանը՝ Ազգային պատկերասրահի հիմնադիր տնօրենը: Թանգարանային իր գործունեության ընթացքում հաջատրյանը կազմակերպել է հայ նկարիչների շուրջ 30 արտասահմանյան ցուցահանդես, տեղերում հանդես եկել հայ կերպարվեստի մասին դասախոսություններով ու զեկույցներով: Միայն Ֆրանսիայում կազմակերպել է Մ. Սարյանի գործերի 3 ցուցահանդես, մեկը՝ Պոմպիդու կենտրոնում, մյուսը՝ Պիկասոյի թանգարանում, երրորդը՝ Փարիզի միջազգային թանգարանում: Գաղտնիք չէ, որ հենց փարիզյան այս ցուցահանդեսները կարելու էր խաղացին Սարյանի արվեստի լայն գնահատման գործում: Պատկերասրահում աշխատելու տարիներին նա կարողացավ կյանքի կոչել շատ կարելու ու խիստ անհրաժեշտ մի հրատարակություն, որի մասին պատկերասրահիցիները երազում էին, բայց նույնիսկ խորհրդային տարիներին իրականացնել չէին կարող: Դա Ազգային պատկերասրահի լիակատար ուղեցույցն էր՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով եւ բազում բարձրորակ վերատպու-



թյուններով: Որպես արվեստաբան՝ հաջատրյանի մեծագույն ավանդներից մեկն էլ այն է, որ նա կարողացավ հայաստանյան արվեստասերների ծանոթացնել օտար երկրներում ապրող մեր հայրենակից արվեստագետների ստեղծագործություններին՝ դառնալով, ասես, հայրենիք-Սփյուռք կամրջի լավագույն սյուներից մեկը: Դժվար է չանդրադառնալ հաջատրյանի վերջին տարիների մի շատ ինքնատիպ ձեռնարկին՝ նրա «Ճանաչի՛ր եւ սիրի՛ր» խորագիրը կրող գիրք-ալբոմների շարքին՝ նվիրված հայ կերպարվեստի նշանավոր դեմքերին: Այդ շարքից յոթ գիրք արդեն ընթերցողի սեղանին է:

Ինչպես Մ. Սարյանն էր 1967-ին իր տուն-թանգարանի տնօրեն ընտրել Շ. հաջատրյանին, վստահել նրան իր ժառանգության ուսումնասիրության գործը, այնպես էլ 2006-ին Գարեգին Բ Ամենայն Յայոց Հայրապետն է վստահել նրան «Խրիմյան» թան-

գարանի տնօրինությունը, որտեղ Արշիլ Գորկու սպասվող գործերի կողքին հանգրվանել են հայաստանյան ու Սփյուռքի նշանավոր հայ նկարիչների գործերը: Վերջիններս՝ շուրջ 75 գործ, նշված թանգարան են մուտք գործել որպես նվիրատվություն՝ կրկին հիմնականում Շ. հաջատրյանի ջանքերով:

Օրերս, իր հոբելյանի առիթով, հաջատրյանն ինքն իրեն յուրօրինակ, միմիայն իրեն բնորոշ «նվեր» արեց. սեփական հավաքածուից 5 գործ՝ մեր հայտնի վարպետների նկարներից պարգևեց «Խրիմյան» թանգարանին՝ առկա նվիրատվությունների հավաքածուն հասցնելով 80-ի՝ այստեղ տնօրեն աշխատելու ութ տարիներից յուրաքանչյուրի դիմաց գրանցելով 10 գործ: Իր անձնական գրադարանից թանգարանին է նվիրել նաեւ կերպարվեստի վերաբերյալ 150 ամուսնու գիրք ու ալբոմ:

Շարունակությունը՝ էջ 8



Ե. Թադեոսյան

րի ու հողվածների հեղինակ, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Մայր տաճարի մշակութային խորհրդական եւ «Խրիմյան» թանգարանի տնօրեն Շահեն հաջատրյանը բոլորեց իր 80-ամյակը: Որքան էլ դժվար է պատկերացնել, այնուհանդերձ, կերպարվեստի այս անխոնջ ու անդադրում նվիրյալն այսօր էլ ակտիվորեն շարունակում է 1959 թվականից որդեգրած իր առաքելության ուղին: Մարտահրավեր նետած տարի-

ւորդ եւ Տիգրանուհի հաջատրյանների ընտանիքում: 1946-ին ընտանիքի հետ հայրենադարձվել է, արվեստաբանական կրթությունն ստացել Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ինստիտուտում: 1959-ից աշխատել է (ուսմանը զուգահեռ) Հայաստանի ազգային պատկերասրահում: 1967-2004 թթ. զբաղեցրել է Մ.



Բ. Վարդանյան



Պ. Կոնստանդյան

Քլայվ ԼՈՒԻՍ

Սկիզբը՝ էջ 4

Բայց մարդկանց մեջ Թշնամին երկու կողմի միջեւ արձարծվող անտեղի սեր է զուգորդել սեռական ցանկության հետ: Նա նաեւ այնպես է արել, որ զավակները կախված լինեն ծնողներից, իսկ ծնողներին տվել է ազդակ՝ սատարելու նրանց՝ այսպիսով ծնելով Ընտանիք, որն օրգանիզմի նման է, միայն թե ավելի վատն է: Որովհետեւ անդամներն ավելի յուրահատուկ են, սակայն նաեւ միավորված են ավելի գիտակից ու պատասխանատու եղանակով: Փաստորեն, այս ամբողջը պարզապես եւս մեկ գործիք է Սիրո մեջ ներքաշման համար: Թշնամին ամուսնացած զույգին նկարագրում է որպես «մեկ մարմին»: Նա չի սահմանել «երջանկությամբ ամուսնացած զույգ» կամ «զույգ, որն ամուսնացավ, որովհետեւ

սիրում էին իրար», բայց դու կարող ես այնպես անել, որ մարդիկ անտեսեն սա: Դու նաեւ կարող ես այնպես անել, որ նրանք մոռանան, որ այն մարդը, ում նրանք Պողոս են կոչում, դա չի սահմանափակել ամուսնացյալ զույգերով: Սոսկ զուգավորումն իսկ, ըստ Նրա, «մեկ մարմին» է ստեղծում: Հետեւաբար, դու կարող ես այնպես անել, որ մարդիկ որպես սիրո ներքոյաններ ընդունեն սեռական զուգավորության իրական նշանակության սովորական նկարագրությունները: Ճշմարտությունն այն է, որ որտեղ էլ որ տղամարդը քնում է կնոջ հետ, այնտեղ, անկախ նրանց ուզել-չուզելուց, նրանց միջեւ մի անդրանցական հարաբերություն է հաստատվում, որը պետք է հավիտենապես վայելեն կամ դրան հավիտենապես դիմանան: Այն ճշմարիտ պնդու-

մից, թե այս անդրանցական հարաբերությունը ստեղծված է պտղաբերության համար եւ հնազանդորեն ընդունվելու դեպքում խիստ հաճախ էլ սեր եւ ընտանիք է պտղաբերում, կարելի է այնպես անել, որ մարդիկ հավատան այն կեղծ դրույթին, թե սիրո, վախի եւ ցանկության այն խառնուրդը, որը նրանք «սիրահարություն» են կոչում, միակ բանն է, որ ամուսնությունը երջանիկ կամ սուրբ է դարձնում: Հատ հեշտ է այս սխալը ծնելը, որովհետեւ «սիրահարությունը» Արեւմտյան Եվրոպայում շատ հաճախ է նախորդում այն ամուսնություններին, որոնք կատարվում են Թշնամու ծրագրերի հնազանդությամբ, այսինքն՝ հավատարմության, պտղաբերության եւ բարի կամքի դիտավորություններով, ճիշտ ինչպես որ կրոնական զգացմունքն է

շատ հաճախ, բայց ոչ միշտ, ուղեկցում դարձին: Այլ խոսքով՝ մարդկանց պետք է քաջալերել, որ ամուսնության հիմք համարեն զուսագեղ եւ աղավաղված տարբերակն այն բանի, ինչը Թշնամին իսկապես խոստանում է դրա արդյունքում: Սրանից երկու շահ ունենք: Առաջինն այն է, որ կարելի է այն մարդկանց, ովքեր ժուժկալության շնորհ չունեն, հեռու պահել այս խնդրի լուծման համար ամուսնություն փնտրելուց, որովհետեւ նրանք չեն տեսնում, որ իրենք «սիրահարված» են, եւ մեր շնորհիվ՝ մեկ այլ շարժառիթով ամուսնանալու զաղափարը նրանց թվում է ցածր ու անվայել: Այո՛, նրանք այդպես են մտածում: Նրանք համարում են, որ փոխադարձ օգնության, մարմնական մաքրության պահպանման եւ կյանքի փոխանցման համար եղած

ամուսնական միության հանդեպ հավատարմության նպատակն ավելի ցածր է, քան զգացմունքների փոթորիկը: (Չանտեսես նաեւ այն, որ պետք է խնամարկյալիդ մտածել տա, թե պսակի խորհուրդը շատ վիրավորական է): Եվ երկրորդ՝ որեւէ տեսակի սեռական անզուսպ կիրք, եթե ամուսնության նպատակն ունի, կհամարվի «սեր», եւ այդ «սերը» կանտեսի այդ մարդու ամբողջ մեղավորությունը եւ կպաշտպանի նրան բոլոր հետեւանքներից, եթե նա ամուսնանա հեթա-նոսի, խելապակասի կամ պոռ-նիկի հետ: Բայց այս մասին ավելին կխոսեմ իմ հաջորդ նամակում:

Յո սիրառատ քեռի՝
ԽԱՌՆԱԿԻՉ

Շարունակելի
Սկզբներից թարգմանությունը՝
Ս. Ս.-ի

ԽԱՌՆԱԿԻՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԹԻԹԵՐ ՍՈՒՐՅԱՆԻ...

Սկիզբը՝ էջ 5

Փիթեր Սուրյանի երկում ուրույն տեղ է գրավում Փոլի ընկերուհու կերպարը: Նա բացահայտում է Բոդոյանի շինծու սերն ընդհանրացումների հանդեպ եւ այն, թե ինչպես է նա շահարկում «Հայաստան» անունը՝ իր թուլությունը սքողելու համար: Այդ աղբիկը դիմում է տառապալալ մարդկության վերացական զանգվածին՝ ինքն իրեն պաշտպանելու նպատակով: Ինչ վերաբերում է Փոլին, ապա նրա մասին հարկ է հավելել հետեւյալը. սովորաբար նույնիսկ հարազատ հորից ստացված հեռախոսազանգը խթանում է նրա երկակի ապրումները: Նա ուզում է հասկանալ, արդյոք իրեն համակել է ջղայնությունը, թե՞ ընկերության զգացումը: Այսպիսով՝ մարդիկ երկվության մեջ են. նրանք անկարող են հավատարիմ մնալ բացարձակ հասկացություններին ու արժեքներին: Նրանք մտնում են կործանարար կոնֆլիկտների մեջ: Այս գիտակցումը վերջնականապես լույս է սփռում Փոլի՝ ավելի վաղ արված արտահայտության վրա եւ օգնում է ընթերցողներին տեսնել նրա ամբողջական գնահատականը մեկ հարթության վրա: Այստեղ խոսքը վերաբերում է հայոց պատմության խորհրդանշական վերականգնմանը: Պատմությունը տվյալ դեպքում ընկալվում է ոչ թե որպես արձանագրված իրադարձությունների միջոցով մարմնավորված իդեալներ, այլ՝ որպես անհատական անհետեւողականության արձանագրություն: Այդ անհետեւողականությունը վերածվում է խմբային ողբերգության: Փոլը, փորձելով հավատացնել Սարգսին, որ ինքը ջանասիրաբար աշխատում է որպես գրող, ի վերջո խոստովանում է. «Նա ինձ չէր հավատում, բայց այդ տարիների ընթացքում, մինչ ես ավարտեցի կոտորածների մասին իմ պատմությունը, ես համոզեցի նրան, որ այդ ամենը ճշմարիտ է»

(տե՛ս Sourian P., նույն տեղում, էջ 86): Այս առեղծվածային դրվագը հավաքում ու միեւնույն ժամանակ ցիր ու ցան է անում այն թելերը, որոնցից հյուսված է Փիթեր Սուրյանի վեպը: Այդ ընթացքում ճշմարտությունը եւ անհատական նպատակները ոչնչացվում են՝ մարդկային մտքի անկայունության պատճառով, եւ շատ ակնարկներ մնում են չինտեգրված: Այսպիսով՝ մենք զգում ենք, որ մեկնաբանությունն ու արարքը էական են նույնիսկ առանց գիտակցելու, թե ինչու: Չնայած այս խառնաշփոթությունը կարող է վկայել հավերժական անորոշության մասին, որի պայմաններում աշխատում է մարդկային միտքը, այն նաեւ ընթերցողին մշուշոտ անբավարարվածության վիճակի մեջ է դնում:

Փիթեր Սուրյանը, հրաժարվելով ճշգրիտ ու անհերքելի փաստեր հաղորդելուց իր ընթերցողներին, միանում է իր դարաշրջանի ավանգարդիստ գրողների խմբին: Այս առնչությամբ Քրիստոֆեր Լաշը հակիրճ ասել է. «Արվեստը կյանքի պես պատրանք է: Մարդկային փորձություններին կամայականորեն իմաստ հաղորդելն այլ պարագայում անիմաստ մի բան է: Արդի գրողները գլխիվայր են շրջել իբրեւյան բանաձեւը. այն իրականությունը, որ նրանք ցանկանում են վերաստեղծել իրենց գրվածքներում, լոկ պատրանք է» (տե՛ս Lasch Ch., The Culture of Narcissism. New York: Norton: 1978, էջ 88): Սակայն նման կտրուկ փոփոխություններն իրենց մեջ վտանգ են պարունակում, քանզի դրանք ֆրոստրացիայի են ենթարկում մարդկային հիմնարար մղումը՝ այն է՝ իմաստ տեսնել բարդության եւ բազմազանության մեջ: Երբ Սուրյանի վեպն ավարտվում է, այն «դարպասը», որը տանում է դեպի իմաստի բացահայտումը, այդպես էլ մնում է կողաված:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՇԱՀԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ - 80

Սկիզբը՝ էջ 7

Եվ այսպես՝ անցած այս ութ տարում Շ. Խաչատրյանը կարողացել է հավաքել նշանավոր վարպետներ Էդգար Շահինի, Շարլ Ադամյանի, Լեւոն Թյուրյունյանի, Գառգուի, Ժանսեմի, հայրենի նկարիչներից Մինաս Ավետիսյանի, Հակոբ Հակոբյանի, Ռաֆայել Աթոյանի, Լավինիա Բաթբուկ-Մելիքյանի, Էդուարդ Արծրունյանի եւ այլոց գործեր, որոնք արդեն իրենց տեղն են գտել Էքսպոզիցիայում:

Ստորեւ ներկայացնում ենք վերջերս Շ. Խաչատրյանի նվիրաբերած բարձրարվեստ հինգ կտավները, որոնք ժամանակին նվիրաբերել էին իրեն:

1. Եղիշե Թադեւոսյան (1870-1936), Լճակ. 1910 թ. (այս գործը Խաչատրյանին է նվիրել մոսկվաբնակ Մարիա Ստեպանովա Կիրեւան),
2. Բարթուղ Վարդանյան (1897-1987), Բնակար. 1966 թ. (նվիրատվությունը՝ հեղինակից),
3. Պետրոս Կոնտուրաջյան (1905-1956), Տնակ. 1936 թ. (այս գործը Խաչատրյանին է նվիրել նկարչի եղբայրը՝ Արշակը, Փարիզում, 1970 թ.),
4. Մ. Սարյան. Հայաստան, եռապատկեր (սա Հայաստանի գրողների միության շենքի երկրորդ հարկում առկա որմնակարի Էգբիկն է՝ կատարված ժողովրդական նկարիչ Հենրիկ Սիրավյանի կողմից, ով նաեւ ջերմ մակագրությամբ եսքիզը (1988) նվիրել է Խաչատրյանին),



5. Մ. Սարյան. Հայաստան. Լեռներ, (1964 թ. նկարահանվեց «Մ. Սարյան» վավերագրական ֆիլմը՝ նվիրված վարպետի ստեղծագործությանը: Որպեսզի նկարներն ազատորեն լուսավորվեն եւ չվնասվեն, նկարչի աշակերտ Սիրավյանը մեկնում է Խորհրդային Միության տարբեր թանգարաններ եւ տեղերում կրկնօրինակում Սարյանի ավելի քան 40 գործ: Վերոհիշյալ այս կրկնօրինակումը հետագայում Սիրավյանը նվիրել է Շահեն Խաչատրյանին՝ վերջինիս 50-ամյակի կապակցությամբ):

Ա. Ս.



ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹ ՄԻԱՇՋՆՈՒՀՈՒ ՄԱՍԻՆ, ՈՎ ԿՈՒՅՍԻ ՀԱՆԳԵՐՁ ԵՄԱՅՆԵԼ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍԲ ԷԶՄԻԱՇՆՈՒՄ

1836 թ. Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Սինդիկատի ներկայացված թեմերի վիճակագրության մեջ, որ հրապարակված է «Արարատ» ամսագրում, հետաքրքիր մի տեղեկություն կա Երեւանի վիճակի մասին. «Այս վիճակում կան նաեւ 4 կուսանք»:

Տեղեկությունը հետաքրքիր է այնքանով, որ 19-րդ դարի սկզբներին թեմական այս տարածքում, որն ընդգրկում էր ընդհուպ մինչեւ Տաթևն ու Նախիջեւանը, Հայ Առաքելական Եկեղեցու կուսանոցներ այլևս չկային: Սակայն հայտնի է նաեւ, որ կուսանոցների բացակայության պարագայում անգամ գտնվում էին կանայք, ովքեր հրաժարվելով աշխարհիկ կյանքից՝ ընդունում էին միանձնական ուխտը եւ ծառայում եկեղեցուն: Թերեւս, նրանցից մեկն էր նաեւ 1790 թվականին վախճանված կույս Հռիփսիմե Աբելյանցը, ում աճյունն ամփոփված է Սբ Գայանե վանքի շրջափակի արեւմտյան կողմում գտնվող գերեզմանատանը: «Տեղ լուսաւորեսցէ գիւղի Ղափանցի Աբելեանց բարեպաշտուհի Հռիփսիմէ կուսին որ առ ժամանակ ինչ ես ի սբ ուխտին կրօնաւորեալ աստէն Էառ զվախճան կենաց իւրոյ ի ՌՄԽԴ թուի»,- կարդում ենք շիրմաքարի վրա: Տապանաքարի այս արձանագրությունն այն ամենն է, ինչ հայտնում է կույսի մասին:

Այս առումով առավել ուշագրավ է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվներում պահվող՝ դեռեւս անտիպ մի գրություն: Այն վերաբերում է Էջմիածնում կուսության ուխտն ընդունած Հռիփսիմե Օսեփովնային, ով 1821 թվականին, ի պատասխան Թիֆլիսի համապատասխան մարմինների հարցման, տեղեկություններ է հաղորդում իր մասին՝ հավանաբար

Թիֆլիսի Սբ Ստեփանոս կուսանաց անապատ մտնելու համար:

Ավելորդ չենք համարում փաստաթուղթը հրապարակել ամբողջությամբ:

«Ի 1821 ամի ապրիլի 23 ի Թիֆլիզ, կոյս Հռիփսիմե Յովսեփեանի կացուցեան եւ պարտաւորութեան աղագաւ եղել հարցունել եւ ցուցաւ իսկ.

Չառաջինն՝ եմ երիտուն եւ ութ ամաց հասակի:

Երկրորդ՝ գոյով իմ երկուտասան ամեայ հայրն իմ Յովսեփն (որ բնակէր յայնժամ ի Ջաւախթնու Ախալքալաքն) յաւուրս պատրիարքութեան Դուկասու տարեալ զիս ընծայեաց Սրբոյ Աթոռոյն Էջմիածնայ ի կուսութեան՝ եւ անդ հրամանաւ յիշեալ պատրիարքին եւ վերահասութեամբ Աշտարակու Գեորգ Աղային յանձնեցեալ եղել ի գեղջն Էջմիածնի կուսի միոյ՝ քեռ տէր Յարութիւն քահանայի այժմ աստ գտանեցելոյ:

Երրորդ՝ շնորհեաց ինձ անտ ի սբ Էջմիածնի գիւղերն կուսի հանգուցեալ արքեպիսկոպոսն Յովհաննէս եւ եղել սեւագգեաց:

Չորրորդ՝ այնու դիտմամբն տարեալ եղել որ մինչեւ ցմահն անդ մնայցելի:

Հինգերորդ՝ ի շարժիլն յայս կոյս պարսից Աղայ Մահմատ խանին եւ ի խառնակել կողմանցն այնմիկ վերստին յիշեալ պատրիարքն յանձնեաց զիս հորն իմոյ եւ օրհնութեան թղթով՝ որ ի ՌՄԽԴ (1795 թ.) թուականին եւ ի մայիս արդ 12ին դարձոյց զիս յերկիրն իմ: Բայց որովհետեւ՝ երկիրն մեր գոյով ընդ տերութեան հազարացւոյց ի վտարանդի էր յայնժամ պատերազմատուրքեամբ փաշայից ընդ միմեանս, վասն որոյ հոր եղբայրն իմ փախուցեալ զիս անտի եքեր աստ ի Թիֆլիզ առ մօրեղբայրն

իմ, եւ նա եւս յանձնեաց զիս Կաթուղիկէ Եկեղեցւոյ ավագ քահանայ հանգուցեալ Տեղ Առաքել Ջամազեանին, յորմէ ուսայ զհայերէն գիր եւ ընթերցայ միմիայն զսաղմոս եւ զԺամագիրք եւ պատուեցի զուխտադրութիւն ծնողաց իմոց եւ ինքնայօժար կամաւ սիրեցի զվարս կուսութեան:

Վեցերորդ՝ աստիճան յումեքէ չեմ ընկալեալ:

Եօթներորդ՝ յօրմէ այնմանէ մինչ ցարդ կամ ընդ հովանեաւ ի տան յիշեալ աւագ քահանային հանգուցելոյ:

Ութերորդ՝ ոչ եկեղեցական եւ ոչ այլ ինչ իրաց արդիւնաւորութիւնս չեմ վայելեալ, այլ միայն կառաւարել եմ զիս իմով ասղագործ ձեռագործութեամբ եւ խնամարկութեամբ պահպանողին իմոյ ի տան եւ ութ ամս եւ այժմ որք եմ ի ծնողաց»:

Գրության մեջ շարադրված տեղեկությունները թույլ են տալիս որոշ եզրահանգումներ անել, որոնցից ամենաուշագրավը կույսի՝ միանձնական ուխտին նվիրվելու տարեթիվն է: Ինչպես 1821 թ. գրության մեջ իր մասին հայտնում է արդեն 38-ամյա միանձնուհին, կույսի հանդերձ է ստացել 20 տարեկան հասակում, ինչից կարելի է ենթադրել, որ 18-րդ դարի վերջերին (այս դեպքում՝ առնվազն 1782 թ.) Մայր Աթոռ Սբ Էջմիածնում պահպանվել է կանանց՝ կուսության ուխտին նվիրվելու կարգը, որ կատարվել է եպիսկոպոսի կողմից:

Երկրորդ՝ կուսանոցներից դուրս բնակվող միանձնուհիներն ապրում էին առանձին խնամակալների հովանու ներքո՝ իրենց ապրուստը հոգալով անեղնագործությամբ եւ կամ նման մեկ այլ աշխատանքով:

Արխիվային այս գրությունը կարելու է

նաեւ մեկ այլ հանգամանքով: Այն, հակառակ որոշ վրաց պատմաբանների պնդումների, թե Ախալքալաքում հայերը բնակություն են հաստատել շատ ավելի ուշ, հաստատում է, որ առնվազն 18-րդ դարի վերջերին Ախալքալաքում հայեր էին բնակվում, ինչպես Հռիփսիմե կույսի ընտանիքը, որի հայրը որոշել էր աղջկան նվիրաբերել Սբ Էջմիածնին:

Ու թեւեւ հայերեն գրված գրության տակ կույսի ստորագրությունը վրացերենով է, այնուամենայնիվ, կույսին ծանոթ է եղել նաեւ հայերենը, որ ուսանել է իրեն Թիֆլիսի ավագ քահանա տէր Առաքել Ջամազյանը, «յորմէ ուսայ զհայերէն գիր եւ ընթերցայ միմիայն զսաղմոս եւ զԺամագիրք եւ պատուեցի զուխտադրութիւն ծնողաց իմոց եւ ինքնայօժար կամաւ սիրեցի զվարս կուսութեան»:

Հեղինակ՝ ՄԿՐՏՅԱՆ

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրօնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան»

թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517 197

Էլ. փոստ՝ qh@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

kh-tert.livejournal.com

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 16.9.2014 թ.

Տպագրակալ՝ 2100

Գինը՝ 50 դրամ